ԶԵԿՈՒՅՑ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում արձանագրված խնդիրների վերաբերյալ

ՎԱՆԱՁՈՐ 2025

Ժողովրդավարության զարգացման հիմնադրամ

National Endowment for Democracy
Supporting freedom around the world

Շվեդիա
Sverige

Հեղինակներ՝ Նազելի Մովսեսյան
Անուշ Պետրոսյան

Խմբագիր՝ Արթուր Սաքունց

Սույն զեկույցի թողարկումը հնարավոր է դարձել Շվեդիայի, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և Ժողովրդավարության ազգային հիմնադրամի օժանդակության շնորհիվ:

Զեկույցում տեղ գտած տեսակետները և վերլուծությունները արտահայտում են հեղինակների կարծիքը և կարող են չհամընկնել Շվեդիայի, Ժողովրդավարության զարգացման հիմնադրամի և Ժողովրդավարության ազգային հիմնադրամի տեսակետների և դիրքորոշումների հետ:

ՆԱԽԱԲԱՆ

Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը (այսուհետ նաև՝ Կազմակերպություն) շուրջ 20 տարի իրականացնում է զորակոչի գործընթացի մշտադիտարկում, զինվորական հաշվառման ենթակա և պահեստազորում հաշվառված անձանց, զորակոչիկների իրավունքների և պարտականությունների շարունակական իրազեկում և իրավական խորհրդատվության տրամադրում:

ՀՀ Կառավարության 2024 թվականի ապրիլի 25-ին որոշմամբ[1] ապրիլի 29-ից մինչև հուլիսի 31-ը հայտարարվեց շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության 2024 թվականի ամառային զորակոչ: Հետագայում Կառավարությունը ամառային զորակոչը երկարաձգեց մինչև 2024 թ. օգոստոսի 15-ը ներառյալ[2]:

Այնուհետև ՀՀ Կառավարության 2024 թ. նոյեմբերի 21-ի որոշմամբ[3] նոյեմբերի 25-ից մինչև 2025 թվականի հունվարի 31-ը հայտարարվեց 2024 թվականի ձմեռային զորակոչ:

Ինչպես անդրադարձել ենք զորակոչերի ընթացքում մարդու իրավունքների վիճակի վերաբերյալ Կազմակերպության կողմից հրապարակած նախորդ զեկույցներում և տեղեկանքներում[4], հաշվի առնելով այն հանգամանքը, որ 2021 թվականից սկսած Հայաստանի Հանրապետությունում սկսեցին պարբերաբար անցկացվել պահեստազորում հաշվառված քաղաքացիների վարժական հավաքներ, Կազմակերպությունը սկսեց դիտարկել նաև նշված հավաքի կազմակերպման և անցկացման ընթացքը և պահեստազորայինների կողմից բարձրաձայնված խնդիրները: Սույն զեկույցում անդրադարձ է կատարվում դիտարկվող ժամանակահատվածում (2024 թ. ապրիլի 29-ից մինչև 2025 թ. հունվարի 31-ը) Կազմակերպություն դիմած պահեստազորում հաշվառված անձանց բարձրաձայնած խնդիրներին:

Հաշվի առնելով, որ զորակոչի գործընթացն անմիջականորեն վերաբերում է նաև զինվորական հաշվառման ենթակա անձանց և օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիներին, սույն զեկույցում

[1] https://www.e-gov.am/gov-decrees/item/42489/
[2] arlis.am/DocumentView.aspx?docid=195659
[3] https://www.irtek.am/views/act.aspx?aid=127583
[4] Զեկույց_Զորակոչ-2023.pdf
զեկույց. 2021 թ. ձմեռային, 2022 թ. ամառային եվ 2022 թ. ձմեռային զորակոչերի ընթացքում զորակոչիկների իրավունքների վիճակի մասին | հքավ
Զորակոչ-2019-ձմեռ-2020-ամառ-2020-ձմեռ-2021-ամառ.pdf

անդրադարձ է կատարվում հաշվետու ժամանակահատվածում Կազմակերպությանը դիմած զինվորական հաշվառման ենթակա անձանց և օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների բարձրացրած խնդիրներին:

ԶՈՐԱԿՈՉԻ ԳՈՐԾԸՆԹԱՑԸ ԿԱՐԳԱՎՈՐՈՂ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ, ՕՐԵՆՍԴՐԱԿԱՆ ԲԱՑԵՐԻ ԵՎ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅԱՆ ԿԻՐԱՌՄԱՆ ՀԵՏ ԿԱՊՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Զորակոչի գործընթացը, զորակոչիկների բժշկական ծառայության և սպասարկման, նրանց առողջական վիճակի հետազոտությունների հետազոտությունների իրականացումը, տարբեր հիմքերով պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից տարկետման իրավունքից օգտվելու դրույթները, պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների անցկացումը կարգավորող և հարակից հիմնական իրավական ակտերն են.

- ***«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքը[5],***
- ***«Պաշտպանության մասին» ՀՀ օրենքը[6],***
- ***«Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 18-ի N 404-Ն որոշումը[7],***
- ***«Քաղաքացու առողջական վիճակի հետազոտման և բժշկական փորձաքննության, հետազոտման և փորձաքննության ուղեգրման կարգերը, հետազոտում և բժշկական փորձաքննություն իրականացնող մարմինները և դրանց գործունեության կարգը, փորձաքննության եզրակացությունների***

[5] https://www.arlis.am/documentview.aspx?docid=199723
[6] https://www.arlis.am/documentview.aspx?docid=191089
[7] https://www.arlis.am/documentview.aspx?docid=201121

ձևերը, բժշկական հետազոտությունների և բժշկական հաստատությունների ցանկերը, իրականացված ծառայությունների դիմաց փոխհատուցման կարգը սահմանելու և Հայաստանի Հանրապետության կառավարության մի շարք որոշումներ ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 18-ի N 405-Ն որոշումը[8],

- ***«Սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին» » ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 18-ի N 450-Ն որոշումը[9],***

- ***«Գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու, հայաստանի հանրապետության կառավարության 2002 թվականի օգոստոսի 29-ի N 1394-Ն և 2015 թվականի փետրվարի 5-ի N 117-Ն որոշումներում փոփոխություններ կատարելու, ինչպես նաև Հայաստանի Հանրապետության կառավարության 2000 թվականի հունվարի 13-ի N 15 որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 18-ի N 451-Ն որոշումը[10],***

- ***«Մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տալու կարգը և պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 18-ի N 457-Ն որոշումը[11]***

- ***«Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 18-ի N 1174-Ն որոշումը[12]:***

[8] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=201122
[9] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=202239
[10] https://arlis.am/DocumentView.aspx?docid=189049
[11] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135030
[12] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=196616

2024 թվականի հունվարի 16-ին հանրային քննարկման դրվեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացումներ և փոփոխություններ կատարելու մասին նախագիծը[13], որում որպես հիմնավորում ներկայացվում էր պարտադիր զինվորական ծառայության զորակոչի և պահեստազորային պատրաստության միջոցառումների կազմակերպման և անցկացման շրջանակներում քաղաքացիներին իրենց զինվորական հաշվառման վայրի մարմին ներկայանալու վերաբերյալ ծանուցումների գործընթացը հստակեցնելու անհրաժեշտությունը:

ՀՀ պաշտպանության նախարարությունը՝ որպես նախագծի հեղինակ, մատնանշել էր, որ հստակեցված չեն ծանուցումների պատշաճ տրման ձևաչափերը, ինչպես նաև նախատեսված չէ հրապարակային ծանուցման միջոցով քաղաքացուն տեղեկացումը:

Նախագծով **ծանուցումների եղանակները՝** փաստաթղթային **կամ** օրենքով սահմանված **անհատական կամ հրապարակային,** սահմանվել էին ոչ թե «**և**», այլ «**կամ**» շաղկապով, տալով հնարավորություն կամահայտնությամբ ընտրել, թե ինչ միջոցով կատարել ծանուցումը:

Կազմակերպությունը պաշտպանական գերատեսչությանը դիրքորոշում ներկայացրեց առ այն, որ պարտադիր զինվորական կամ այլընտրանքային ծառայության հայտարարված զորակոչին մասնակցելու համար պետք է ապահովվի քաղաքացու պատշաճ ծանուցումը և անկախ ծանուցման ընտրված եղանակից, ծանուցումը պետք է լինի այնպիսին, որով հնարավոր լինի ապացուցել քաղաքացու պատշաճ տեղեկացված լինելու փաստը, այսինքն պետք է ձեռնարկի անհրաժեշտ և բավարար միջոցներ՝ ապահովելու համար քաղաքացու տեղեկացված լինելու իրավունքը[14]:

ՀՀ քաղաքացիական դատավարության օրենսգիրքը մինչև հրապարակային ծանուցում կատարելը նախատեսում է մի շարք գործողություններ, և բոլոր միջոցները սպառելուց հետո է միայն սահմանում հրապարակային ծանուցման պահանջ:

Կազմակերպությունն առաջարկել է պարտադիր զինվորական ծառայության զորակոչի, վարժական հավաքների և զինվորական վարժանքների կազմակերպման

[13] https://www.e-draft.am/projects/6756/justification
[14] https://www.youtube.com/watch?v=cq3maUDwHPk

և անցկացման շրջանակներում քաղաքացիներին իրենց զինվորական հաշվառման վայրի մարմին ներկայանալու համար տրվող պատշաճ ծանուցումների եղանակները սահմանել փաստաթղթային՝ միաժամանակ համաձայնության դեպքում նաև օրենքով սահմանված անհատական կամ հրապարակային կարգով:

2024 թվականի մայիսի 22-ի որոշմամբ[15] կատարված փոփոխությամբ հստակեցվեցին քաղաքացուն պատշաճ ծանուցում տրամադրելու եղանակները, այն է՝ ծանուցագիրը փաստաթղթային կամ փոստային կապի միջոցով կամ անհատական կամ հրապարակային եղանակով տրամադրելը: Միևնույն ժամանակ ըստ օրենքի՝ քաղաքացուն պատշաճ ծանուցման մասին փաստը հաստատող փաստաթուղթ կամ հանգամանք են համարվում՝

1) ծանուցագիրն առձեռն հանձնելու դեպքում՝ ծանուցագիրը ստանալու մասին քաղաքացու ստորագրությամբ հաստատված ստացականը.

2) փոստային կապի միջոցով ծանուցման դեպքում՝ ծանուցագիրը ներառող փոստային պատվիրված նամակը քաղաքացուն հանձնված լինելը հաստատող փաստաթուղթը կամ էլեկտրոնային հավաստումը.

3) անհատական ծանուցման դեպքում՝ «Ինտերնետով հրապարակային և անհատական ծանուցման մասին» Հայաստանի Հանրապետության օրենքով սահմանված՝ քաղաքացու պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկված ծանուցագիրը քաղաքացու կողմից կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը.

4) հրապարակային ծանուցման դեպքում՝ օրենքով սահմանված Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում քաղաքացուն ուղղված ծանուցագրի քաղվածքի տեղադրումը:

Սույն օրենքի 20-րդ հոդվածի 5-րդ մասի համաձայն՝ քաղաքացուն ծանուցումն առաջին հերթին իրականացվում է նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ծանուցագիրն ուղարկելու միջոցով՝ պաշտոնական էլեկտրոնային փոստի առկայության դեպքում: Ընդ որում, քաղաքացու համաձայնության պարագայում սույն հոդվածի 4-րդ մասով սահմանված դեպքերում քաղաքացու ծանուցումը կարող է իրականացվել բացառապես նրա պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկված ծանուցագրի միջոցով, որի դեպքում եթե նույնիսկ բացակայում է այն

[15] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=193799

կարդալու մասին էլեկտրոնային հավաստումը, ապա քաղաքացին պատշաճ ծանուցված է համարվում ծանուցումն ստանալուն հաջորդող հինգերորդ օրվանից: Քաղաքացու կողմից պաշտոնական էլեկտրոնային փոստ չունենալու կամ քաղաքացու պաշտոնական էլեկտրոնային փոստի հասցեով ուղարկված ծանուցագիրը քաղաքացու կողմից ստանալու մասին էլեկտրոնային հավաստման (եթե առկա չէ սույն մասում նշված համաձայնությունը) բացակայության դեպքերում քաղաքացու ծանուցումն իրականացվում է քաղաքացուն ծանուցագիրն առձեռն կամ փոստային պատվիրված նամակով հանձնելու միջոցով: Ծանուցագիրն առձեռն հանձնելու անհնարինության կամ առձեռն հանձնվող ծանուցագիրը քաղաքացու կողմից ստանալուց հրաժարվելու կամ ծանուցագիրը ներառող փոստային պատվիրված նամակը քաղաքացուն հանձնված լինելը հաստատող փաստաթղթային կամ էլեկտրոնային հավաստման բացակայության կամ քաղաքացու կողմից փոստային պատվիրված նամակը ստանալուց հրաժարվելու դեպքերում քաղաքացու ծանուցումն իրականացվում է հրապարակային ծանուցման միջոցով՝ Հայաստանի Հանրապետության կառավարության որոշմամբ սահմանված կարգով: Հայաստանի Հանրապետության հրապարակային ծանուցումների պաշտոնական կայքում քաղաքացուն ուղղված ծանուցագրի քաղվածքը տեղադրելու օրվանից հետո՝ տասներորդ օրը, քաղաքացին համարվում է ծանուցված: Սույն մասի համաձայն առձեռն հանձնվող ծանուցագիրը կամ ծանուցագիրը ներառող փոստային պատվիրված նամակն ստանալուց քաղաքացու հրաժարումը գրավոր արձանագրվում է ծանուցագիրն առձեռն կամ փոստային պատվիրված նամակը հանձնող անձի կողմից՝ նշելով հրաժարման օրը, ամիսը, տարին և ժամը:

- 2024 թվականի ապրիլի 1-ին իրավական ակտերի հրապարակման միասնական կայքում տեղադրված նախագծով ի թիվս «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի մի շարք դրույթներում առաջարկվող փոփոխությունների, առաջարկվում էր փոփոխություն կատարել նաև նույն զորամասում եղբայրների ծառայության կազմակերպման և ՀՀ պաշտպանության նախարարության կողմից սահմանված պայմաններում և վայրում զինվորական ծառայություն անցնելու պայմանագիր կնքած քաղաքացիների նկատմամբ Օրենքով սահմանված հետևանքի կիրառման պայմանների վերաբերյալ հոդվածում:

Նախագծով նախատեսված էր զորակոչվող եղբայրներին օրենքով սահմանված կարգով նույն զորամաս զորակոչելու հիմքում դնել վերջիններիս մասնագիտացումը:

2024 թվականին, նախագծի հրապարակային քննարկման ներկայացնելուց հետո, Կազմակերպությունը, նման կարգավորումը խտրական համարելով այն զորակոչիկների նկատմամբ, ովքեր չունեն նույն մասնագիտացումը, ինչ զինվորական ծառայության մեջ գտնվող իրենց եղբայրները և ելնելով այն հանգամանքից, որ միաժամանակ զորակոչվող եղբայրների կամ ծառայության մեջ եղբոր գտնվելու պարագայում մյուս եղբոր զորակոչի դեպքերը օբյեկտիվորեն չեն կարող զգալի լինել, և չեն կարող էական բացասական ազդեցություն ունենալ բանակի մարտունակության վրա, ինչպես նաև այն հանգամանքից, որ եղբայրների միասին ծառայությունը բխում է զինծառայողների լավագույն շահերից այն իմաստով, որ զորակոչվող եղբայրը կկարողանա առավել հեշտությամբ ինտեգրվել զինվորական ծառայության մեջ՝ զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր աջակցությամբ, որն իր հերթին կնպաստի վերջինիս ծառայողական պարտականությունների պատշաճ կատարմանը, առաջարկություն ներկայացրեց ՀՀ պաշտպանության նախարարության Օրենքի 26-րդ հոդվածի 4-րդ մասով նախատեսված եղբայրների նույն զորամասում ծառայության անցնելու մասին դրույթի կիրառման հիմքում չդնել ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության վայրի զորամասի համալրում նախատեսված լինելու կամ չլինելու հանգամանքը և զորակոչվող եղբոր մասնագիտացումը, հնարավորություն ընձեռելով եղբայրներին ծառայելու նույն զորամասում:

Կազմակերպության առաջարկությունը, սակայն, չընդունվեց ՀՀ պաշտպանության նախարարության կողմից՝ պատճառաբանությամբ, որ «փոփոխությունների կատարման նպատակն է լուծել պրակտիկայում առաջացած խնդիրը, հավելելով, որ գործընթացի չկարգավորված լինելն առնվազն հանգեցնում է կամ օրենքի պահանջների խախտման կամ զորամասերի համալրման գործընթացում խնդիրների առաջացման»:

2024 թվականի հուլիսի 12-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում կատարվեցին համապատասխան

փոփոխությունները[16]: Մասնավորապես, սահմանվեց, որ շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբայր ունեցող շարքային կազմի պարտադիր զինծառայողն իր ցանկությամբ ծառայության է նշանակվում եղբոր ծառայության վայրի զորամասում, բացառությամբ, եթե շարքային կազմի պարտադիր զինվորական ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության ժամկետը գերազանցում է 18 ամիսը (նախկինում՝ 17 ամիսը), կամ եղբայրը պարտադիր զինվորական ծառայություն է անցնում այնպիսի զորամասում, որտեղ ծառայություն անցնելու համար անհրաժեշտ պայմանները չեն բավարարվում զորակոչվող եղբոր կողմից, **կամ ծառայության մեջ գտնվող եղբոր ծառայության վայրի զորամասի համալրում նախատեսված չէ** հայտարարված զորակոչի շրջանակներում **կամ համալրում նախատեսված է միայն մասնագիտական պաշտոններում նշանակելու համար**, և զորակոչվող եղբայրը չունի համապատասխան մասնագիտացում:

Հիշեցնենք, որ Օրենքի նախկին կարգավորմամբ զորակոչվող եղբոր համար համապատասխան մասնագիտացում ունենալու կարիք չկար:

- 2024 թվականի հոկտեմբերի 24-ին «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 22-րդ հոդվածի 3-րդ մասի 2-րդ կետը շարադրվեց հետևյալ խմբագրությամբ.

  «Հայաստանի Հանրապետությունում կամ օտարերկրյա պետություններում հանրակրթական, ինչպես նաև հիմնական կրթության հիմքի վրա հիմնական կրթությունը ավարտելու տարում՝ առանց ընդհատման արհեստագործական կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով ընդունված և սովորող քաղաքացուն»: Սույն կետի համաձայն՝ հանրակրթական ծրագրերով սովորելու դեպքում տարկետում տրվում է մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, իսկ արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողին՝ մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան քաղաքացու 20 տարին լրանալու օրը[17]:

[16] https://www.arlis.am/documentview.aspx?docid=195582

[17] https://www.arlis.am/documentview.aspx?docid=199574

Նախկին կարգավորմամբ[18] տարկետումը տրվում էր մինչև ուսումնառության ավարտի օրը ներառյալ, սակայն ոչ ավելի, քան զորակոչիկի 19 տարին լրանալու օրը: Ընդ որում կարգավորումը տարածվում էր թե՛ հանրակրթական ծրագրերով սովորողների, թե՛ արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողների վրա:

Այսինքն, արհեստագործական և միջին մասնագիտական կրթական ծրագրերով սովորողներին տրամադրվող տարկետման ժամկետը երկարաձգվել է՝ նախկինում գործող մինչև վերջիններիս 19 տարին լրանալու օրվանից փոխվելով մինչև 20 տարին լրանալու օրը:

- 2024 թվականի փետրվարի 29-ի փոփոխությամբ «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 29.1 հոդվածը լրացվեց 14-րդ մասով՝ հետևյալ բովանդակությամբ[19]. «Պատրաստության և կիրառման ընթացքում աշխարհազորայինների վրա տարածվում են օրենքով սահմանված՝ զինվորական կանոնագրքերի պահանջները, որոնց խախտումն աշխարհազորայինի համար առաջացնում է օրենքով սահմանված պատասխանատվություն:»
- 2024 թվականի ապրիլի 18-ին ՀՀ կառավարության N 534-Ն[20] որոշմամբ փոփոխություններ կատարվեցին «Զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկը, ինչպես նաև քաղաքացու կամ զինծառայողի առողջական վիճակին հակացուցված զինվորական ծառայության պայմանները սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն որոշման[21] 1-ին, 14-րդ և 55-րդ հոդվածներում:

Կատարված փոփոխությունները վերաբերում են մի շարք առողջական խնդիրների՝ **մտավոր հետամնացության, կենտրոնական նյարդային համակարգի արատների՝ կիստաների, գիշերամիզության** առկայության պայմաններում՝ զորակոչիկների և զինծառայողների զինվորական ծառայությանը պիտանիությանը:

ՀՀ Կառավարության 2018 թ. N 404-Ն որոշմամբ հիվանդությունների դասակարգման մեջ 2018 թվականից մինչ օրս կատարված փոփոխությունները դիտարկենք ստորև:

[18] https://www.arlis.am/documentview.aspx?docid=199394
[19] https://www.arlis.am/documentview.aspx?docid=191087
[20] https://www.arlis.am/documentview.aspx?docid=191958
[21] https://www.arlis.am/documentview.aspx?docid=191981

Այսպես, ի սկզբանե ՀՀ Կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման առաջին հոդվածով սահմանվում էր.

- **ծանր (խորը) կամ չափավոր աստիճանի մտավոր հետամնացության առկայության դեպքում** զորակոչիկները ճանաչվում են ոչ պիտանի զինվորական ծառայության համար («ա» կետ),
- **թեթև աստիճանի մտավոր հետամնացության, վարքային խանգարումներից անկախ մտավոր հետամնացության այլ ձևերի** առկայության դեպքում զորակոչիկները ճանաչվում են **ժամանակավորապես ոչ պիտանի** զինվորական ծառայության համար («բ» կետ), **զինծառայողները՝ ոչ պիտանի** զինվորական ծառայության համար,
- **«թեթև աստիճանի, առանց վարքային խանգարումների այլ մտավոր հետամնացության, սոցմանկավարժական բարձիթողի վիճակներ»** ախտորոշման դեպքում զորակոչիկները ճանաչվում են սահմանափակումով **պիտանի** զինվորական ծառայության համար («գ» կետ):

Նշված կարգավորմամբ մտավոր հետամնացություն ունեցող զորակոչիկները ճանաչվում էին պիտանի զինվորական ծառայության համար և ծառայողական պարտականություններն իրականացնելիս բախվում մի շարք խնդիրների: Ի դեպ, 2018 թվականից Հելսինկյան քաղաքացիական ասամբլեայի Վանաձորի գրասենյակը սկսեց հատուկ ուշադրություն դարձնել մտավոր և հոգեկան առողջության խնդիրներ ունեցող զորակոչիկի իրավունքների պաշտպանությանը, հատկապես, երբ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից պատշաճ և օբյեկտիվ հետազոտության չենթարկվելու արդյունքում նման առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկ ճանաչվել էր պիտանի պարտադիր ժամկետային զինվորական ծառայության համար: Ծառայության ընթացքում զինծառայողի մոտ առկա հոգեկան առողջության ու մտավոր խնդիրներն ավելի էին սրվել, նա ծեծի էր ենթարկվել հրամանատարներից մեկի կողմից, որից հետո նրան երեք օր պահել են կարգապահական գումարտակում: Հետագայում զինծառայողն ինքնավնասման փորձ էր կատարել, կորցրել խոսելու ունակությունը, ցնցումների մեջ ընկել[22]: Հաշվի առնելով զորակոչի ընթացքում քաղաքացուն տրված առողջական վիճակի մասին ոչ

[22] https://hcav.am/hcav-am-19-01-2023/

իրավաչափ և ոչ հիմնավոր որոշումը Կազմակերպությունը հանձնառել է քաղաքացու պաշտպանությունը դատարանում: Կազմակերպության կողմից Դատարանին ներկայացվել էր առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունը ոչ իրավաչափ ճանաչելու պահանջ, ինչը սակայն մերժվել էր: Վարչական դատարանում քննված գործի քննությունը տևել է 3 տարի, որից հետո Կազմակերպության կողմից բողոք է ներկայացվել վերաքննիչ դատարանին, պահանջելով ամբողջությամբ բեկանել ՀՀ վարչական դատարանի վճիռը: Վերաքննիչ դատարանը, քննության առնելով բողոքի հիմքերը, փաստարկները և պահանջը, բավարարել է այն մասամբ և գործն ուղարկել դատարան՝ նոր քննության: Այս պահին գործով նշանակված է դատաբժշկական փորձաքննություն:

Զինծառայողի գործի վերաբերյալ ՀՀ պաշտպանության նախարարի մամուլի նախկին խոսնակ Արծրուն Հովհաննիսյանը 2019 թվականի հուլիսին գրառում էր կատարել ֆեյսբուքյան իր էջում, նշելով, որ «ՀՀ ՊՆ-ը հետևողական է, որպեսզի առողջական որևէ խնդիր ունեցող քաղաքացի չզորակոչվի զինված ուժեր, իսկ զինծառայողները որոնք ունեն առողջական խնդիրներ ծառայությունից վերադառնան առողջացած»[23]:

2019 թվականի հուլիսի 25-ին ուժի մեջ մտավ «ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-ն որոշման մեջ փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին որոշումը», ինչից հետո օրենքի հետադարձ սկզբունքի ուժով զինծառայողը վաղաժամ զորացրվեց զինվորական ծառայությունից:

Նշված որոշմամբ ՀՀ կառավարության N 404-Ն որոշման «բ» կետով սահմանվեց, որ **«թեթև աստիճանի մտավոր հետամնացություն, մտավոր հետամնացության այլ ձևեր՝ անկախ վարքային խանգարումներից»** ախտորոշման դեպքում զորակոչիկները ճանաչվում էին **ժամանակավորապես ոչ պիտանի** զինվորական ծառայության համար, իսկ **զինծառայողները՝ ոչ պիտանի** զինվորական ծառայության համար:

Այսինքն, 2019 թվականի հուլիսի 25-ին N 404-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունը զորակոչիկների և զինծառայողների իրավունքների պաշտպանության տեսանկյունից կարևոր երաշխիք էր, քանի որ մտավոր հետամնացություն ունեցող զինծառայողները զինվորական ծառայության

[23] https://azat.tv/artsrun-hovhannisyani-parzabanumy-zoramas-chnerkayacox-zintsarayoxi-harcov/

ընթացքում առավել հաճախ են ենթարկվում խոշտանգումների, վատ և արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունքի, ինչն էլ շատ հաճախ ինքնասպանությունների կամ իանքնասպանությունների փորձերի պատճառ է դառնում:

Սակայն 2024 թվականի ապրիլի 18-ին ՀՀ կառավարության N 534-Ն որոշմամբ սահմանվեցին նոր դրույթներ, որոնցով վերստին փոփոխվեցին մտավոր հետամնացության առկայության դեպքում զինվորական ծառայության պիտանիության աստիճանը սահմանող դրույթները: Մասնավորապես, սահմանվեց.

- զինվորական ծառայության համար **ոչ պիտանի** են ճանաչվում **չափավոր**, **ծանր** և **խորը** աստիճանի մտավոր հետամնացություն, **թեթև աստիճանի մտավոր, վարքային խանգարումներով մտավոր** այլ և չճշտված հետամնացություն ունեցող զորչակոչիկները և զինծառայողները («ա» կետ), իսկ
- **առանց վարքային խանգարումների ինտելեկտուալ անբավարար վիճակներ, ուսուցանման և գրագիտության հետ կապված խնդիրներ ունեցող** զորակոչիկները և զինծառայողները ճանաչվում են **սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար** («բ» կետ):

Այսինքն, վերստին որոշվեց, որ ինտելեկտուալ անբավարար և մանկավարժական բարձիթողի վիճակները, թեթև աստիճանի, այլ մտավոր և չճշտված մտավոր հետամնացությունները, որոնք չեն ուղեկցվում վարքի կամ հարմարվողականության խանգարումներով, ինչպես նաև ուսուցանման և գրագիտության հետ կապված խնդիրները (գրագիտության ցածր մակարդակը, անձի պրիմիտիվությունը) խոչընդոտ չեն հանդիսանում զինվորական ծառայության անցնելու համար:

Արձանագրում ենք նաև, որ Կառավարության վարքագծի նման փոփոխությունը և անհետևողականությունը, մեր համոզմամբ, պայմանավորված է 2020-2024 թվականներին պարտադիր զինվորական ծառայության ենթակա քաղաքացիների թվի նվազմամբ, ինչի մասին հավաստում են նաև պաշտոնապես հրապարակված տվյալները[24], և նախկին կարգավորմանը վերադառնալն ունի միայն ու միայն

[24] https://www.azatutyun.am/a/banakits-kasharkov-azatvelou-veraberyal-19-kreakan-varouyt-3-tari-3-amsva-yntatskoum-/33434084.html «Վերջին տասը տարիներին զորակոչիկների միայն 30-40 տոկոսն է բանակ գնում: 2010-ին 44 հազար երիտասարդ է զորակոչվել, ինը տարի անց այդ թիվը նվազել է մինչև 24 հազար:» - Հայկ Սարգսյան, պատգամավոր

պարտադիր զինվորական ծառայության ենթակա զորակոչիկների թվաքանակի ավելացման նպատակ, սակայն նման մոտեցումը ակնհայտ հետընթաց է և մեծացնում է մարդու իրավունքների խախտման ռիսկերը:

Սույն փոփոխության նախագծի հեղինակ ՀՀ պաշտպանության նախարարության կողմից որպես հիմնավորում նշվում էր այն հանգամանքը, որ 2019 թվականին կատարված փոփոխությունների արդյունքում «մտավոր հետամնացություն» ախտորոշմամբ պարտադիր զինվորական ծառայության համար ոչ պիտանի ճանաչված զորակոչիկների թիվը ավելացել է. 2020 թվականի ամառային զորակոչի ընթացքում նշված ախտորոշմամբ ոչ պիտանի է ճանաչվել 188 զորակոչիկ, իսկ 2022 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում՝ 321 զորակոչիկ:

Ըստ ՀՀ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի, «առանց վարքային խանգարումների մանկավարժական բարձիթողի վիճակ» ունեցող զինծառայողները չեն ընդգրկվի մարտական հերթապահության մեջ, նրանց կարգելվի վարել տրանսպորտային միջոցներ և տեխնիկա, ղեկավարել անձնակազմ:

Ակնհայտ է, որ միայն նշված մոտեցումները չեն կարող ապահովել մտավոր խնդիրներ ունեցող զինծառայողների՝ զինվորական պարտականությունների արդյունավետ իրականացումը և առողջության վատթարացման կանխարգելումը:

Փաստացի, կատարված փոփոխությամբ ընդունվել է զորակոչիկների և զինծառայողների մարդու իրավունքների վիճակը վատթարացնող իրավական ակտ:

Այսպիսով, տարբեր ժամանակահատվածներում նույն առողջական խնդրով հետազոտված զորակոչիկների նկատմամբ դրսևորվում է ընտրողական, ոչ սկզբունքային, խտրական վերաբերմունք, քանի որ 2019 թվականի հուլիսի 25-ից մինչև 2024 թվականի ապրիլի 18-ն ընկած ժամանակահատվածում փորձաքննված զորակոչիկները նշված առողջական խնդրով ճանաչվել են ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար, մինչդեռ 2024 թվականի ապրիլի 18-ին իրականացված փոփոխությամբ զորակոչիկները ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար:

ՀՀ Կառավարության 2004 թվականի մարտի 4-ի «Պետության կողմից երաշխավորված անվճար եվ արտոնյալ պայմաններով բժշկական օգնության եվ սպասարկման մասին» 318-Ն որոշման առաջին հավելվածով սահմանվում է պետության կողմից երաշխավորված անվճար եվ արտոնյալ պայմաններով

բժշկական օգնություն եվ սպասարկում ստանալու իրավունք ունեցող՝ բնակչության սոցիալապես անապահով ու առանձին (հատուկ) խմբերի ցանկը, մասնավորապես, 5-րդ կետով սահմանվում է, որ վերոնշյալ արտոնյալ պայմաններով բժշկական օգնություն և սպասարկում ստանալու իրավունք ունեն մինչև 18 տարեկան երեխաները: Վերոնշյալից հետևում է, որ առկա է պետության պոզիտիվ պարտականությունը մինչև 18 տարեկան երեխաների առողջապահության և բուժսպասարկման պատշաճ ապահովումը հիշյալ իրավական կարգավորման շրջանակներում, որը սակայն պատշաճ չի իրականացվում, միևնույն ժամանակ պետությունը պահանջում է, որ անկախ առողջական խնդրի առկայությունից զորակոչիկն իրականացնի իր զինվորական պարտականությունը:

Մյուս փոփոխությունը, որը կատարվեց 2024 թվականի ապրիլի 18-ին ՀՀ կառավարության N 534-Ն որոշմամբ, վերաբերում է կենտրոնական նյարդային համակարգի արատներին (նորագոյացություններ, կիստաներ և այլն): Մասնավորապես, եթե նախկինում չափավոր կամ աննշան արտահայտված գործառույթների խանգարումով և դանդաղ զարգացող ընթացքով կենտրոնական նյարդային համակարգի արատների, օրգանական զարգացող հիվանդությունների առկայության դեպքում սահմանվում էր, որ զորակոչիկներն ու զինծառայողները համարվում են ոչ պիտանի զինվորական ծառայության համար, ապա **ներկայումս ոչ պիտանի են ճանաչվում միայն գործառույթների չափավոր արտահայտված խանգարումով և դանդաղ զարգացող ընթացքով կենտրոնական նյարդային համակարգի արատներ ունեցող անձինք** («բ» կետ), **իսկ նույն հիվանդության գործառույթների աննշան արտահայտված խանգարման կամ առանց գործառույթների խանգարման կամ կլինիկական դրսևորումների բացակայության պարագայում անձինք ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար**:

Պաշտպանության նախարարությունը վկայակոչել է այն հանգամանքը, որ կիստաների 0,5 սմ և ավելի մեծ չափերի առկայության դեպքում, անգամ առանց կլինիկական դրսևորումների և ախտաբանական փոփոխությունների, զորակոչիկները ճանաչվում են ոչ պիտանի զինվորական ծառայության համար ընդգծելով, որ ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման պահանջներին

տեղեկացված լինելու արդյունքում տարեցտարի ավելանում է զորակոչիկների թիվը, ովքեր արդի սարքավորումներով հետազոտման և ախտորոշմոն դեպքում ճանաչվում են ոչ պիտանի զինվորական ծառայության համար: **Ընդ որում, նախագծի հիմնավորմամբ՝ նշված ախտորոշմամբ զորակոչիկներին հետազոտելու և փորձաքննելու համար մեծ մասամբ հիմք են հանդիսանում իրենց իսկ նախաձեռնությամբ իրականացված ՄՌՏ հետազոտությունների արդյունքները:** ՀՀ Կառավարության 2024 թվականի ապրիլի 18-ի նիստի ժամանակ ՀՀ վարչապետը նշեց, որ «գլխուղեղի կիստաների առկայությունը հավաստող բժշկական հետազոտությունը երբեմն հնարավոր չի լինում նույնականացնել այն անձի հետ, ով ենթարկվել է այդ հետազոտության և կոռուպցիոն մեխանիզմի կիրառման արդյունքում», ըստ Վարչապետի, զորակոչիկներն ազատվում են զինվորական ծառայությունից: Ըստ ՀՀ ՊՆ-ի՝ 2023 թվականի ամառային զորակոչի ընթացքում քաղաքացիների կողմից ներկայացվել է ավելի քան 1400 ՄՌՏ հետազոտության տվյալ, որոնցից 737-ի դեպքում զորակոչիկները ճանաչվել են ոչ պիտանի զինվորական ծառայության համար, իսկ 2023 թվականի ձմեռային զորակոչի ընթացքում՝ ներկայացվել է ավելի քան 1000 հետազոտության տվյալ և այդ տվյալների հիման վրա իրականացված առողջական վիճակի հետազոտությունների և բժշկական փորձաքննության արդյունքում 220 զորակոչիկ ճանաչվել է ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

Ըստ Կառավարության, նման փոփոխության նպատակը կոռուպցիոն ռիսկերի նվազեցումն է, որոնք դրսևորվում են փաստաթղթերի կեղծման միջոցով: Մինչդեռ ակնհայտ է, որ թանկարժեք բժշկական հետազոտություններ չիրականացնելով և հետևաբար առանց պատշաճ բժշկական հետազոտությունների իրականացման, առողջական խնդիրներով անձանց զինվորական ծառայության զորակոչելով կոռուպցիոն ռիսկերի կանխարգելման խնդիրը չի կարող լուծվել: Ընդհակառակը, պաշտպանական, ինչպես նաև առողջապահական համակարգում կոռուպցիոն դրսևորումները պետք է վերացվեն ինստիտուցիոնալ և համակարգային փոփոխությունների իրականացմամբ՝ հիմնված մարդու իրավունքների և օրենքի գերակայության սկզբունքի վրա: Կոռուպցիոն ռիսկերի դեմ պայքարը չպետք է հանգեցնի մարդու իրավունքների խախտմանը:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը գտնում է, որ նման պարագայում անհրաժեշտ է ոչ թե փոփոխել նշված առողջական խնդրով պայմանավորված զորակոչիկների՝ զինվորական ծառայությունից ազատելու կամ տարկետում տրամադրելու դրույթը՝ ծառայության ընթացքում առողջական խնդրի վատթարացման դեպքում նրանց կյանքն ու առողջությունը վտանգելով, այլ ընդլայնել զորակոչիկներին համալիր հետազոտության ենթարկելու համար նախատեսված պետական բյուջեից հատկացվող ֆինանսական միջոցները և ապահովել բոլոր զորակոչիկների առողջության վիճակի իրական, օբյեկտիվ գնահատումը և առողջական խնդիրների բացահայտումը՝ օբյեկտիվ և համալիր բժշկական հետազոտությունների իրականացման միջոցով:

Զինվորական ծառայությունը առողջական խնդիրների առկայության հետ համատեղելու մոտեցումը ինքնին լուրջ ռիսկ է հանդիսանում զինծառայողների մարդու իրավունքների տեսակետից և պետք է արմատապես վերացնել նման արատավոր և մարդու իրավունքների տեսանկյունից խիստ վտանգավոր մոտեցումը:

Ինչ վերաբերում է գիշերամիզությանը (էնուրեզ), ապա 2024 թվականի ապրիլի 18-ին ՀՀ կառավարության N 534-Ն[25] որոշմամբ կատարված օրենսդրական փոփոխությամբ՝ պարտադիր զինվորական ծառայության շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի զինծառայողները, ովքեր նախկինում, ըստ ՀՀ ՊՆ-ի, ծառայության ընթացքում յուրաքանչյուր վեց ամիսը մեկ փորձաքննության ենթարկվելուց հետո՝ հաստատված և առանց նյարդային, հոգեբուժական կամ միզասեռական համակարգի հիվանդությունների ախտանիշների առկայության դեպքում ճանաչվում էին ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար և վաղաժամ զորացրվում էին զինվորական ծառայությունից, նոր կարգավորմամբ ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար և շարունակում զինվորական ծառայությունը:

ՀՀ ՊՆ-ի կողմից որպես Կառավարության որոշման փոփոխության նախագծի հիմնավորում ներկայացվել է 2022 թվականին զինվորական ծառայության ընթացքում գիշերամիզության առաջին անգամ հայտնաբերման 10 դեպքի, 2023

[25] https://www.arlis.am/documentview.aspx?docid=191958

թվականի ընթացքում 33 դեպքի մասին, որոնց դեպքում զինծառայողները օրվա հեշտացված կարգացուցակով ծառայություն անցնող ևս 66 զինծառայողների հետ միասին վաղաժամկետ արձակվել են պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից:

2024 թվականի մարտին ՀՔԱ Վանաձորի գրասենյակը ՀՀ պաշտպանության նախարարությանն ուղված գրությամբ հայտնել էր սույն դրույթը անփոփոխ թողնելու անհրաժեշտության մասին՝ հաշվի առնելով նշված խնդրով զինվորական ծառայությունից վաղաժամ զորացրված զինծառայողների ոչ մեծ թիվը[26]:

Մինչդեռ, ՀՀ ՊՆ-ն դրույթն անփոփոխ թողնելը համարեց ոչ նպատակահարմար, տեղեկացնելով, որ «գիշերամիզություն ունեցող որևէ զինծառայողի խարանի ենթարկելու կամ հոգեբանական ծանր կացության մեջ դնելու կամ դեպրեսիայի կամ ինքնասպանության փորձի և ինքնասպանության հասցնելու դեպք չի արձանագրվել»:

Մինչդեռ, 2018 թվականին, երբ Կառավարության 2018 թ. N 404-Ն որոշմամբ սահմանվեց գիշերամիզությամբ զորակոչիկների զինվորական ծառայությանը պիտանիության դրույթը ծառայության իրականացման ընթացքում վերջիններիս խարանավորման հետ կապված արձանագրվեցին խնդիրներ[27], երբ, օրինակ, զինծառայողները արձակման դուրս գալիս հստակ գիտակցում են, որ զորամասի մոտակայքում ապրող բնակիչները գիտեն իրենց առողջական խնդրի մասին, որը հոգեբանական խնդիրների պատճառ էր դառնում:

Ակնհայտ է, որ զինված ուժերում նման խնդրով ի սկզբանե զինվորական ծառայության զորակոչված զինծառայողների նույնիսկ հատուկ, առանձնացված զորամասերում ծառայության կազմակերպումը հանդիսանում է սեգրեգացիա, որը կարող է պատճառ դառնալ ծանր հոգեբանական վիճակների, դեպրեսիայի, լարվածության, որոնք իրենց հերթին կարող են խիստ բացասաբար ազդել թե՛ զինծառայողների մարդու իրավունքների վիճակի, թե՛ նրանց կողմից իրենց ծառայողական պարտականությունների կատարման արդյունավետության վրա:

Այսպիսով, գտնում ենք, որ 2024 թվականի ապրիլի 18-ին ՀՀ կառավարության N 534-Ն որոշմամբ կատարված փոփոխությունները չեն համապատասխանում

[26] https://hcav.am/opinion-hcav-29-04-2024/
[27] https://razm.info/132181

զորակոչիկների և զինծառայողների մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում պետության ստանձնած պարտավորություններին, կատարված փոփոխությունը հանդիսանում է զորակոչիկների և զինծառայողների մարդու իրավունքների վիճակը վատթարացնող իրավական ակտ, քանի որ զորակոչիկներին մտավոր հետամնացության առկայությամբ զինվորական ծառայությանը պիտանի ճանաչելու դեպքում իրականացված փոփոխությունները պարունակում են վերջիններիս առողջական վիճակի վատթարացման ռիսկեր, գիշերամիզության առկայությամբ զորակոչիկներին և զինծառայողներին զինվորական ծառայությանը պիտանի ճանաչելու դեպքում նման խնդիրներով զինծառայողները կհայտնվեն հոգեբանական ավելի ծանր վիճակում՝ իրենց նկատմամբ խարանի իրական ռիսկերի դրսևորումների հետևանքով:

Ինչ վերաբերում է կիստաների ախտորոշմանը, Կազմակերպությունը գտնում է, որ անհրաժեշտ է զորակոչիկներին ենթարկել համալիր բժշկական հետազոտությունների պետական միջոցներով և ոչ թե այդ պարտականությունը թողնել քաղաքացիների վրա: Միաժամանակ անհրաժեշտ է զորակոչիկների հետազոտությունների ցանկում ներառել նաև թանկարժեք բժշկական հետազոտությունների իրականացումը՝ խուսափելու համար թերի և ոչ օբյեկտիվ հետազոտությունների իրականացման արդյունքում զորակոչիկներին պարտադիր ժամկետային զինվորական ծառայության համար պիտանի ճանաչելու և դրա հետևանքով վերջիններիս առողջական վիճակի վատթարացման և մարդու իրավունքների խախտման դեպքերից:

- 2024 թվականի նոյեմբերի 21-ին իրավական ակտերի նախագծերի հրապարակման միասնական կայքէջում քննարկման դրվեց **«Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մեջ լրացումներ և փոփոխություններ ու Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 405-Ն որոշման մեջ փոփոխություն կատարելու մասին» ՀՀ կառավարության որոշման նախագիծը:**

Նախագիծը նախատեսում էր ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 404-Ն որոշման մի շարք հոդվածներում լրացումներ և փոփոխություններ

կատարել: Մասնավորապես, Որոշման 1-ին հավելվածով սահմանված զինվորական ծառայության համար քաղաքացու կամ զինծառայողի պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի 48-րդ հոդվածում լրացնել «ե» կետով, այն է՝ պերիֆերիկ զարկերակների ֆունկցիոնալ հիվանդությունները՝ անգիոպարալիտիկ փուլում, որով 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ սյունակներով փորձաքննվողների համար սահմանվում է պիտանիություն, 3-րդ սյունակով փորձաքննվողները՝ ոչ պիտանի ռազմաուսումնական հաստատությունում ուսանելու համար, իսկ 6-րդ սյունակով փորձաքննվողները՝ ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար՝ Ե* («*» հաշվի առնելով զորամասի (կառուցվածքային ստորաբաժանման) հրամանատարի (պետի) կողմից տրված բնութագիրը և փորձաքննվողի՝ ծառայությունը շարունակելու անձնական ցանկությունը, ինչպես նաև զինծառայողի հիվանդության բնույթը, ծառայության առանձնահատկությունները, փորձը և փաստացի աշխատունակությունը կարող է անհատապես կայացվել որոշում՝ «սահմանափակումով պիտանի է զինվորական ծառայության համար»):

Նախագծով առաջարկվում էր փոփոխություն կատարել 17-րդ հոդվածում, որի չորրորդ պարբերությամբ սահմանվում է, որ երեք անգամ տարկետում ստանալուց հետո, եթե ՖԶԻ-ն պահպանվում է նույն սահմաններում կամ քաշը 43կգ-ից պակաս է կամ հասակը 150 սմ-ից ցածր է, ապա փորձաքննությունը իրականացվում է 20 հոդվածի «բ» կետով: Նույն կետով են փորձաքննվում նաև մինչև 15 կգ/մ2 ՖԶԻ ունեցող զորակոչիկները, որոնց մոտ առկա են ոսկրամկանային համակարգի զարգացման հապաղում: Առաջարկվող փոփոխությամբ առաջին անգամ տարկետում ստանալուց հետո, եթե ՖԶԻ-ն պահպանվում է նույն սահմաններում կամ քաշը 43 կգ-ից պակաս է կամ հասակը 150 սմ-ից ցածր է, ապա փորձաքննությունն իրականացվում է 20-րդ հոդվածի «բ» կետով, այն է՝ ներզատիչ համակարգի և նյութափոխանակության հիվանդություններ՝ գործառույթների չափավոր արտահայտված խանգարումով, որով զորակոչիկները ժամանակավորապես ոչ պիտանի են ճանաչվում զինվորչական ծառայության համար:

18-րդ հոդվածի յոթերորդ պարբերությունում «մոնոնուկլեոզով հիվանդացած» բառերը առաջարկվեց փոխարինել «մոնոնուկլեոզի սուր փուլում գտնվող» բառերով.

Գործող կարգավորմամբ՝ EBV-կապակցված վարակային մոնոնուկլեոզով հիվանդացած զորակոչիկներին «ա» կետով տրվում է տարկետում, որից հետո բուժման դրական արդյունքի դեպքում (արյան ընդհանուր ցուցանիշների նորմալացում՝ լիմֆոցիտներ, մոնոցիտներ և կամ ատիպիկ մոնոնուկլեարների բացակայություն, արյան կենսաքիմիական ցուցանիշների նորմալացում՝ ԱԼՏ, ԱՍՏ, ԳԳՏ; փայծաղի չափսերի նորմալացում ՈՒԶՀ-ով) փորձաքննությունը իրականացվում է «բ» կետով, որով սահմանվում է պիտանիություն զինվորական ծառայության համար:

Փաստորեն, առաջարկվեց հիվանդության միայն սուր դրսևորման դեպքերում տարկետում տրամադրել զորակոչիկներին :

Նախագծով առաջարկվում էր փոփոխություններ նաև 20-րդ հոդվածում: Մասնավորապես՝ հոդվածի 9-րդ պարբերությունում գործող կարգավորմամբ՝ զգալի արտահայտված իսկական գինեկոմաստիայով անձինք փորձաքննվում են «բ» կետով (ժամանակավորապես ոչ պիտանի է զինվորական ծառայության համար): Չափավոր գինեկոմաստիա ունեցող անձինք փորձաքննվում են «գ» կետով (սահմանափակումով պիտանի է զինվորական ծաայության համար), եթե նրանց մոտ բացակայում են հորմոնալ խանգարումները: Աննշան ոչ կանացի տիպի (պուբերտատ) գինեկոմաստիայով փորձաքննվողները, որոնց մոտ չկա հորմոնալ խանգարում, ճանաչվում են պիտանի զինվորական ծառայության համար:

Առաջարկվող փոփոխությամբ չափավոր գինեկոմաստիա ունեցող անձիք, անկախ հորմոնալ խանգարումների առկայությունից, այսինքն նույնիսկ հորմոնալ խանգարումների առկայությամբ սահմանափակումով պիտանի են ճանաչվելու զինվորական ծառայության համար, իսկ աննշան կանացի տիպի գինեկոմաստիայով փորձաքննվողները՝ պիտանի զինվորական ծառայության համար:

Նույն հոդվածի 20-րդ պարբերությունն առաջարկվում է լրացնել նոր նախադասությամբ՝ «Սուբկլինիկական հորմոնային շեղումներով սույն հոդվածի «դ» կետով տարկետում ստացած անձինք տարկետման ընթացքում դիտարկման, ստացած բուժման կամ բուժումից հրաժարվելու դեպքերում տարկետման ժամկետի ավարտից հետո իրականացված հետազոտությունների արդյունքներով ճանաչվում են պիտանի զինվորական ծառայության համար սահմանափակումով, եթե չեն արձանագրվում «ա» կամ «բ» կետերով սահմանված վիճակները:».

Ներկայացվող կարգավորմամբ, փաստորեն, «գեներալիզացված լիմֆադենոպաթիայի» առյակությամբ շարքային և կրտսեր ենթասպայական կազմերի պարտադիր ժամկետային զինծառայողներն այլևս չեն ճանաչվում ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

26-րդ հոդվածի (հոդվածը ներառում է սրտամկանի, սրտապարկի (պերիկարդի), պսակաձև անոթների, սրտի փականային ապարատի, աորտայի հիվանդությունները և զարգացման արատները) վերջում առաջարկվեց լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Սույն հոդվածի «ե» կետով տարկետում ստացած անձինք տարկետման ընթացքում դիտարկման, ստացած բուժման կամ բուժումից հրաժարվելու դեպքերում տարկետման ժամկետի ավարտից հետո իրականացված հետազոտությունների արդյունքներով ճանաչվում են պիտանի զինվորական ծառայության համար սահմանափակումով, եթե չեն արձանագրվում «ա», «բ» կամ «գ» կետերով սահմանված վիճակները:».

Սույն փոփոխությամբ ստացվում է, որ եթե նախկինում նույն ախտաբանական վիճակով անձին կարող էր տրամադրվել տարկետում մինչև երեք անգամ, որից հետո անձը նույն խնդրով կարող էր ճանաչվել ոչ պիտանի զինվորական ծառայության համար, ապա այժմ ստացվում է, որ միայն բարդացած առողջական խնդրով անձը կարող է ճանաչվել ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

30-րդ հոդվածի (ներառում է կերակրափողի, ստամոքսի, աղիների, որովայնամզի, լյարդի, լեղապարկի, լեղուղիների, ենթաստամոքսային գեղձի, փայծաղի հիվանդությունները և զարգացման անոմալիաները) հինգերորդ պարբերության վերջում առաջարկվում է լրացնել նոր նախադասություն հետևյալ բովանդակությամբ.

«Սույն հոդվածի «դ» կետով տարկետում ստացած անձինք տարկետման ընթացքում դիտարկման, ստացած բուժման կամ բուժումից հրաժարվելու դեպքերում տարկետման ժամկետի ավարտից հետո իրականացված հետազոտությունների արդյունքներով ճանաչվում են պիտանի զինվորական ծառայության համար սահմանափակումով, եթե չեն արձանագրվում «ա» կամ «բ» կետերով սահմանված վիճակները: »

Սույն փոփոխության արդյունքում, նախկինում նույն ախտաբանական վիճակով անձին կարող էր տրամադրվել տարկետում մինչև երեք անգամ, որից հետո անձը նույն խնդրով կարող էր ճանաչվել ոչ պիտանի զինվորական ծառայության համար, ապա այժմ միայն բարդացած առողջական խնդրով անձը կարող է ճանաչվել ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

Նույն 30-րդ հոդվածի վեցերորդ պարբերությունից առաջարկվեց հանել «չափսերի պահպանման կամ» բառերը: Նախկինում՝ ախտածնային հիվանդությունների բացակայության պայմաններում, եթե փայծաղը սահմանվածից մեծ էր 1սմ և ավելի՝ դիտարկման համար տրվում է տարկետում մեկ անգամ մեկ տարի ժամկետով, որից հետո չափսերի պահպանման կամ բացասական դինամիկայի դեպքում փորձաքննությունը իրականացվում է «բ» կետով: Իսկ չափավոր սպլենոմեգալիա (կայուն 16սմ և ավելի) ունեցող անձինք փորձաքննվում էին «բ» կետով (ժամանակավորապես ոչ պիտանի): Այսինքն՝ առաջարկվող փոփոխությամբ միայն չափավոր սպլենոմեգալիա (կայուն 16 սմ) ունենալու դեպքում է անձը ճանաչվում ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար, իսկ փայծաղի՝ սահմանվածից մեծ չափերի պահպանման փաստը չի դիտարկվում որպես զինվորական ծառայությանը խոչընդոտող հանգամանք:

Նախագծով առաջարկվում էր նաև 30-րդ հոդվածի յոթերորդ պարբերությունում «կամ կալցինատները խումբը» բառերը և «,եթե այն չի հանգեցնում լյարդի ֆունկցիայի խանգարման» բառերը հանել: Նախկինում գործող կարգավորմամբ՝ Լյարդի կալցինատները կամ կալցինատները խումբը մինչև 2 սմ չափսերի փորձաքննվում է «գ» կետով, եթե այն չի հանգեցնում լյարդի ֆունկցիայի խանգարման:

Փաստորեն, անկախ այն հանգամանքից, թե առողջական խնդիրը կհանգեցնի լյարդի ֆունկցիայի խանգարմանը, թե՝ ոչ, 1-ին և 2-րդ սյունակներով փորձաքննվող քաղաքացիները ճանաչվում են սահմանափակումով պիտանի, 4-րդ և 5-րդ սյունակներով փորձաքննվողները՝ պիտանի զինվորական ծառայության համար, իսկ 6-րդ սյունակով փորձաքննվողները՝ ժամանակավորապես ոչ պիտանի:

30-րդ հոդվածի ութերորդ պարբերությունում առաջարկվեց «որից հետո՝ փորձաքննություն «գ» կամ «բ» կետով» բառերը փոխարինել «իսկ տարկետման ընթացքում դիտարկման, ստացած բուժման կամ բուժումից հրաժարվելու դեպքերում զորակոչիկները տարկետման ժամկետի ավարտից հետո իրականացված

հետազոտությունների արդյունքներով ճանաչվում են պիտանի զինվորական ծառայության համար սահմանափակումով, եթե չեն արձանագրվում «ա» կամ «բ» կետերով սահմանված վիճակները» բառերով.

Նախորդ կարգավորմամբ՝ չճշտված ծագման հեպատիտների վերաբերյալ բժշկական փաստաթղթերի առկայության և լյարդի ֆերմենտների ցուցանիշների փոփոխության դեպքում տրամադրվում էր տարկետում մեկ անգամ մինչև մեկ տարի ժամկետով, որից հետո՝ փորձաքննությունն իրականացվում էր «գ» կամ «բ» կետով: Աուտոիմուն հեպատիտների ախտորոշման վերաբերյալ փաստաթղթերի առկայության և հյուսվածաբանական հաստատման պարագայում փորձաքննությունն իրականացվում է «ա» կետով:

Սույն փոփոխությամբ ևս ստացվում է, որ եթե նախկինում նույն ախտաբանական վիճակով անձին կարող էր տրամադրվել տարկետում մինչև երեք անգամ, որից հետո անձը նույն խնդրով կարող էր ճանաչվել ոչ պիտանի զինվորական ծառայության համար, ապա այժմ միայն բարդացած առողջական խնդրով անձը կարող է ճանաչվել ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

34-րդ հոդվածի երկրորդ պարբերության 10-րդ ենթակետում «և լեղապարկի» բառերը առաջարկվեց հանել: Հոդվածը ներառում է կրծքավանդակի, որովայնի խոռոչի, փոքր կոնքի օրգանների, հետորովայնամզային տարածության վիրաբուժական հիվանդությունների, վիրավորումների, վնասվածքների կամ վիրահատությունների հետևանքները:

10-րդ կետը՝ փայծաղի և լեղապարկի հեռացումը կամ բնածին բացակայությունը, փորձաքննությունն իրականացվում է «ա» կետով, որը սահմանում է ոչ պիտանիություն: Հինգերորդ սյունակում նշված անձանց փորձաքննությունը իրականացվում է «բ» կետով.

Առաջարկվեց 34-րդ հոդվածի երրորդ պարբերությունը լրացնել 3-րդ ենթակետով՝ հետևյալ բովանդակությամբ.

«3) լեղապարկի բնածին բացակայությունից կամ հեռացումից հետո վիճակները, **երբ առկա է լեղու արտահոսքի կամ լյարդի պիգմենտագոյացման ֆունկցիայի խանգարում (ուղղակի բիլիրուբինի կայուն բարձրացում 15 մկմ/լ-ից)**», այս պարագայում փորձաքննությունն իրականացվում է «բ» կետով և սահմանում ժամանակավորապես ոչ պիտանիություն 1-ին, 2-րդ, 4-րդ և 5-րդ սյունակներով

փորձաքննվողների համար, իսկ 6-րդ սյունակով փորձաքննվողները ճանաչվում են ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

34-րդ հոդվածի չորրորդ պարբերության 2-րդ ենթակետում «խոլեստերոզը» բառից հետո լրացվեց «, լեղապարկի բնածին բացակայությունից կամ հեռացումից հետո վիճակները (հեռացումից առնվազն մեկ տարի անցնելուց հետո), երբ առկա չէ լեղու արտահոսքի և լյարդի պիգմենտագոյացման ֆունկցիայի խանգարում (ուղղակի բիլիրուբինի կայուն բարձրացում 15 մկմ/լ-ից)» բառերը:

Փաստորեն, փորձաքննությունն այս պարագայում իրականացելու է «գ» կետով 1-ին և 2-րդ սյունակներում փորձաքննվողների համար սահմանելով սահմանափակումով պիտանիություն, 3-րդ, 4-րդ, 5-րդ և 6-րդ սյունակների համար՝ պիտանիություն զինվորական ծառայության համար:

34-րդ հոդվածի հինգերորդ պարբերության 1-ին ենթակետում ևս առաջարկվեց լրացնել, որ լեղապարկի հեռացումից հետո վիճակները, երբ հեռացումից հետո չի անցել մեկ տարի, այս պարագայում զորակոչիկների փորձաքննությունը կիրականացվի «դ» կետով՝ սահմանելով տարկետում բուժման համար մինչև 1 տարով:

47-րդ հոդվածի վերջում առաջարկվեց լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ. «Ոչ լրիվ ինվոլյուցիոն թիմուս ունեցող անձինք փորձաքննվում են «գ» կետով:». Հոդվածը ներառում է մաշկի, ոսկրերի, ներքին օրգանների բարորակ նորագոյացությունները: Նախագծով առաջարկվում է «Ոչ լրիվ ինվոլյուցիոն թիմուս» ունեցող անձանց փորձաքննությունն իրականացնել «գ» կետով, որով 1-ին և 2-րդ սյունակներով փորձաքննվողները ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար:

Առաջարկվեց 48-րդ հոդվածը շարադրել հետևյալ խմբագրությամբ.

«Հոդված 48. ներառում է աորտայի, մագիստրալ, պերիֆերիկ անոթների, ավշային անոթների հիվանդությունները, բնածին արատները, վնասումների հետևանքները և հետվիրահատական վիճակները, որոնք փորձաքննվում են ըստ արյան, ավշային շրջանառության և օրգանների կամ վերջույթների գործառույթների խանգարման աստիճանի:

«Ա» կետին են վերաբերելի մասերը, որոնք ենթարկվել են փոփոխության ստորև՝

1) կենտրոնական

2) զարկերակային և երակային անևրիզմները (հինգերորդ սյունակով փորձաքննվողների համար կիրառվում է «բ» կետը՝ կախված արյան շրջանառության և գործառույթի խանգարման աստիճանից). (ներկայիս կարգավորմամբ՝ կենտրոնական զարկերակային և երակային անևրիզմները (հինգերորդ սյունակով փորձաքննվողների համար կիրառվում է «բ» կամ «գ» կետը՝ կախված արյան շրջանառությունը և գործառույթի խանգարման աստիճանից).

3) աորտայի աթերոսկլերոզը, վիսցերալ ճյուղերի լրիվ կամ մասնակի խցանումը (հինգերորդ սյունակով փորձաքննվողների համար կիրառվում է «բ» կետը՝ կախված արյան շրջանառության և ֆունկցիայի խանգարման աստիճանից). ներկայիս կարգավորմամբ 5-րդ սյունակով փորձաքննությունն իականացվում է ոչ միայն «բ», այլ նաև «գ» կետով, կետերի համեմատությունը տես վերևի աղյուսակում:

4) դռներակի կամ սիներակի թրոմբոզը (հինգերորդ սյունակով փորձաքննվողների համար կիրառվում է «բ» կետը՝ կախված արյան շրջանառության և գործառույթի խանգարման աստիճանից). ներկայիս կարգավորմամբ 5-րդ սյունակով փորձաքննությունն իականացվում է ոչ միայն «բ», այլ նաև «գ» կետով, կետերի համեմատությունը տես վերևի աղյուսակում:

8) հաճախակի կրկնվող թրոմբոֆլեբիտը, ֆլեբոտրոմբոզը, երակների խրոնիկ հիվանդությունը C5-C6՝ խոցերի և հետխոցային սպիներ առկայությամբ (CEAP դասակարգում): Վիրահատական ցուցման դեպքում հինգերորդ սյունակով փորձաքննվողներին առաջարկվում է վիրահատական բուժում, որից հետո փորձաքննությունը իրականացվում է ըստ գործառույթի խանգարման աստիճանի՝ «բ» կամ «գ» կետով. Ներկայիս կարգավորմամբ չի հստակեցվում, թե 5-րդ սյունակով փորձաքննվողներին վիրահատական բուժում առաջարկելուց հետո փորձաքննությունը որ կետով է իրականացվում, նշվում է՝ «հետագա փորձաքննությունը կատարվում է՝ ըստ սույն հոդվածի կետերի».

9) երակների խրոնիկ հիվանդությունը C4 (CEAP դասակարգում)՝ հիպերպիգմենտացիայով և կամ երակային էկզեմայով, մաշկի լիպոդերմատոսկլերոզով և կամ ատրոֆիայով (հինգերորդ սյունակով փորձաքննվողների համար ցուցման դեպքում առաջարկվում է վիրահատական բուժում, որից հետո փորձաքննությունը իրականացվում է ըստ գործառույթի

խանգարման աստիճանի՝ «բ» կամ «գ» կետով). ներկայիս կարգավորմամբ՝ երակների խրոնիկ հիվանդություն C4 (CEAP դասակարգում: հիպերպիգմենտացիա և կամ երակային էկզեմա, մաշկի լիպոդերմատոսկլերոզ և կամ ատրոֆիա (հինգերորդ սյունակով փորձաքննվողների համար վիրահատական ցուցման դեպքում առաջարկվում է վիրահատական բուժում, հետագա փորձաքննությունը կատարվում է՝ ըստ սույն հոդվածի կետերի): Վիրահատական բուժումից հրաժարվելու դեպքում հինգերորդ սյունակով փորձաքննվողների համար կիրառվում է «բ» կետը.

10) փղագարությունը և երրորդ-չորրորդ փուլի լիմֆեդեման:

«Դ» կետով են փորձաքննվում քրոնիկ զարկերակային անբավարարությամբ 2Ա աստիճանի աթերոսկլերոզը, աորտոարտերիտը, խցանող թրոմբանգիտը, II աստիճանի երակային անբավարարությամբ վարիկոզ հիվանդությունը, II փուլի լիմֆեդեման՝ արյան կամ ավշային շրջանառության ժամանակավոր խանգարումով: Ներկայիս կարգավորմամբ «արյան կամ ավշային շրջանառության ժամանակավոր խանգարումով» հատվածը բացակայում է:

89-րդ հոդվածի վերջում առաջարկվում է լրացնել նոր պարբերություն՝ հետևյալ բովանդակությամբ.

«Եղունգների դիստրոֆիկ հիվանդություններով (դաստակների և (կամ) ոտնաթաթերի 5 և ավելի եղունգների ախտահարումները) և օջախային մաշկաբորբով սույն հոդվածի «գ» կետով տարկետում ստացած անձինք տարկետման ընթացքում դիտարկման, ստացած բուժման կամ բուժումից հրաժարվելու դեպքերում տարկետման ժամկետի ավարտից հետո իրականացված հետազոտությունների արդյունքներով ճանաչվում են պիտանի զինվորական ծառայության համար սահմանափակումով, եթե չեն արձանագրվում «ա» կամ «բ» կետերով սահմանված վիճակները:».

Ընդհանուր առմամբ որոշման մեջ կատարված փոփոխությունները որևէ կերպ չեն բխում զինծառայողների մարդու իրավունքների պաշտպանությունից: Վերջին տարիներին ՀՀ Կառավարության 404 Ն որոշման մեջ կատարված գրեթե բոլոր փոփոխությունները միտված են զինված ուժերում զինծառայողների թվաքանակի ավելացմանը, արդյունքում՝ այն առողջական խնդիրները, որոնցով նախկինում զինծառայողները բուժման նպատակով տարկետում էին ստանում կամ ճանաչվում

էին ոչ պիտանի զինվորական ծառայության համար, այժմ պիտանիություն են սահմանում:

Նման մոտեցումն իր էությամբ ունի պատժող բնույթ և մարդու իրավունքների նկատմամբ անհարգալից վերաբերմունքի ցայտուն դրսևորում է:

2024 Թ. ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ԵՎ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ԻՐԱՎԱԿԱՆ ԱԶԱԿՑՈՒԹՅԱՆ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ ՎԻՃԱԿԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում զորակոչի և զինվորական հաշվառման հետ կապված հարցերով Կազմակերպություն է դիմել **131** անձ, որոնցից՝

- **87** (66 %) **զորակոչիկ,**
- **30** (23 %) **պահեստազորում հաշվառված անձ,**
- **10** (8 %) **օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացի,**
- **4** (3 %) **զինվորական հաշվառման ենթակա անձ:**

Համեմատության համար նշենք, որ 2023 թվականի ամառային և ձմեռային զորակոչերին Կազմակերպությանը դիմել էր **172** քաղաքացի, որոնցից՝

- **96** (56%) **զորակոչիկ**,
- **64** (37%) **պահեստազորում հաշվառված** անձ,
- **8** (5%) **զինվորական հաշվառման ենթակա** անձ,
- 4 (2%) **օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցած** անձ:

Ինչպես երևում է՝ թե՛ 2023, թե՛ 2024 թվականների զորակոչերի և վարժական հավաքների ընթացքում Կազմակերպությանը դիմած քաղաքացիների գերակշիռ մասը զորակոչիկներ են, որոնց կողմից բարձրաձայնված խնդիրների մասին առավել մանրամասն կանդրադառնանք սույն զեկույցում:

Օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցած քաղաքացիների թվի աճը 2023 թվականի համեմատ պայմանավորված է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի» մասին ՀՀ օրենքում 2024 թվականի հունվարի 16-ին կատարված փոփոխությամբ: Որոշումը ուժի մեջ մտավ 2024 թվականի փետրվարի 12-ին, սույն որոշմանը Կազմակերպությունն

անդրադարձել է 2023 թվականի ամառային և ձմեռային զորակոչերն ամփոփող զեկույցում[28]:

Կազմակերպությանը դիմած զորակոչիկների, զինվորական հաշվառման ենթակա, պահեստազորում հաշվառված և օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայության չանցած անձանց թիվն ըստ աշխարհագրական տարածքների ներկայացված է աղյուսակ 1-ում:

Աղյուսակ 1. 2024 թ. ամառային և ձմեռային զորակոչին Կազմակերպությանը դիմած անձանց թիվն ըստ աշխարհագրական տարածքների

Դիմած անձանց բանկության վայրերն ըստ մարզերի	Զորակոչիկ	Զինվորական հաշվառման ենթակա անձ	Պահեստազորում հաշվառված անձ	Օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայության չանցած անձ	Ընդամենը
Լոռի	32	3	5	1	41
Երևան	11	1	7		19
Շիրակ	5				5
Կոտայք	1		1		2
Արարատի մարզ	2				2
Արմավիր	1				1
Գեղարքունիք	1				1
Սյունիք	1				1
Արտերկիր	3			7	10
Բնակության վայրը չի հայտնել	30		17	2	49
Ընդամենը	87	4	30	10	131

[28] https://hcav.am/wp-content/uploads/2024/05/%D4%B6%D5%A5%D5%AF%D5%B8%D6%82%D5%B5%D6%81_%D4%B6%D5%B8%D6%80%D5%A1%D5%AF%D5%B8%D5%B9-2023.pdf

Առավել մեծ թվով դիմել են Լոռու մարզից՝ 31 %, որից ավելի քան մեկ երրորդը՝ զորակոչիկներ: Երևան քաղաքից դիմել է 15 %-ը, որի 13 %-ն են զորակոչիկները:

Պահեստազորում հաշվառված քաղաքացիների 23 %-ը Երևան քաղաքից են, Լոռու մարզից դիմել է պահեստազորայինների 16 %-ը:

Արտերկրից դիմած քաղաքացիների 70 %-ը եղել են օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցած անձինք (27 տարեկանից բարձր քաղաքացիներ), 30 %-ը՝ զորակոչիկներ (18-ից 27 տարեկան):

Աղյուսակ 2. Կազմակերպություն դիմած զորակոչիկների, զինվորական հաշվառման ենթակա անձանց, պահեստազորում հաշվառված անձանց և սահմանված կարգի խախտմամբ զինվրական ծառայություն չանցած քաղաքացիների խնդիրներն ըստ յուրաքանչյուր զորակոչի

Խնդիր	**2024 թ. ամառային զորակոչ**				**2024 թ.ձմեռային զորակոչ**			**Ընդամենը**
	Զորակոչիկ	**Զինհաշվ. ենթ. անձ**	**Զինվ. զորակոչ. խախտ. զինծ.**	**Պահեստազորում հաշվառված անձ**	**Զորակոչիկ**	**Զինվ. զորակոչ. խախտ. զինծ.**	**Պահեստազորում հաշվ. անձ**	
Առողջական խնդիրներ /ոչ պատշաճ բժշկական օգնություն ստանալու, առողջական վիճակի զննության արդյունքների հետ անհամաձայնություն, առողջական խնդրի առկայությամբ զինվորական ծառայության ենթակա լինելու մասին խորհրդատվություն	40	1			29			**70**
Առողջական խնդիրների առկայությամբ պահեստազորայինների՝ վարժական հավաքների կանչվելու իրավաչափության վերաբերյալ խորհրդատվություն				5			1	**6**
Առողջական վիճակի թերի հետազոտությունների իրականացման մասին ահազանգ					1			**1**
Զորակոչի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքների չտրամադրման իրավաչափության վերաբերյալ խորհրդատվություն					1			**1**

Ընտանեկան դրության պայմաններից ելնելով պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ենթակա լինելու վերաբերյալ խորհրդատվություն	2				1			**3**
Ընտանեկան դրության պայմաններից ելնելով վարժական հավաքների ներգրավվելու իրավաչափության վերաբերյալ խորհրդատվություն				10			2	**12**
Վարժական հավաքներին ներգրավելու իրավական հիմքերի վերաբերյալ խորհրդատվություն				2				**2**
Աշխատանքով պայմանավորված վարժական հավաքներին մասնակցության վերաբերյալ խորհրդատվություն				4				**4**
Օրենքի պահանջների խախտմամբ զինվորական ծառայություն չանցնելու իրավական հետևանքների վերաբերյալ խորհրդատվություն			7		5			**12**
ԼԳԲՏ համայնքի անձանց զինապարտության/վարժական հավաքների մասնակցության վերաբերյալ և ծառայության անցնելու ընթացակարգերի վերաբերյալ խորհրդատվություն	1			1				**2**
ԱՐՄԵԴ հավելվածում առողջական վիճակի հետազոտության արդյունքների բացակայության/թերի տվյալների մասին ահազանգ					3			**3**
Սեփական միջոցներով առողջական վիճակի հետազոտությունների չիրականացում զորակոչային տարիքի անձ լինելու հանգամանքով պայմանավորված					2			**2**
Ուսումնառության համար պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետման հիմքերի վերաբերյալ խորհրդատվություն	1	1						**2**
Վարժական զորահավաքներին մասնակցելու ծանուցման կարգի վերաբերյալ				1				**1**

խորհրդատվություն								
Վարժական հավաքների կանչվելու դեպքում ԲՈՒՀ-ում սովորող անձանց կրթության իրավունքի ապահովման վերաբերյալ խորհրդատվություն				1				**1**
Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության մեկնելու ծանուցման օրվա փոփոխության հնարավորության վերաբերյալ խորհրդատվություն	1				1			**2**
ՀՀ Կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման մեջ կատարված փոփոխությունների վերաբերյալ խորհրդատվություն					2			**2**
Քաղաքացիներին զինվորական հաշվառման վերցնելու և անձնագրի տրամադրման կարգի վերաբերյալ խորհրդատվություն		1			1	1		**3**
ՀՀ քաղաքացիություն ստանալուց հետո պահեստազորում հաշվառվելու պարտավորության վերաբերյալ խորհրդատվություն				1				**1**
Անձի քաղաքացիությամբ պայմանավորված վարժական հավաքներին մասնակցելու պարտավորության վերաբերյալ խորհրդատվություն				1			1	**2**
Խուսափելու հիմքով հարուցված քրեական գործի շրջանակներում տրամադրված խորհրդատվություն					1			**1**
Եղբայրների նույն զորամասում զինվորական ծառայության անցնելու կարգավորման վերաբերյալ խորհրդատվություն	1							**1**
Այլընտրանքային ծառայության անցնելու կարգի վերաբերյալ խորհրդատվություն		1			1			**2**
«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում կատարված փոփոխությունների մասին խորհրդատվություն						2		**2**

Զինվորական ծառայությունից տարկետում ստացած քաղաքացու վարորդական վկայականի ստացման վերաբերյալ խորհրդատվություն					1			**1**
Ընդամենը	**44/46 խնդիր**	**4**	**7**	**26**	**43/49 խնդիր**	**3**	**4**	**131/139 խնդիր**

Զորակոչիկների 79 %-ը դիմել է ոչ պատշաճ բժշկական հետազոտության, առողջական վիճակի զննության արդյունքների հետ անհամաձայնության, առողջական խնդրի առկայությամբ զինվորական ծառայության ենթակա լինելու մասին խորհրդատվություն ստանալու նպատակով:

Զորակոչի կազմակերպման և իրականացման ընթացքում պարբերաբար կրկնվող խնդիրներ

Զորակոչից զորակոչ արձանագրվող և չլուծված խնդիրներից է առողջական վիճակի հետազոտությունների հետ անհամաձայնությունների դեպքում զինկոմիսարիատի կողմից զորակոչիկներին կրկին նույն բուժհաստատություններ ուղեգրելու զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովների պրակտիկան: Անհիմն է զորակոչիկներին նույն բժիշկների մոտ հետազոտության ուղեգրելու պրակտիկան այն դեպքերում, երբ զորակոչիկը բողոքարկել է նույն բժշկի կողմից նախկինում տրված ախտորոշումը: Նման դեպքերում զորակոչիկների կողմից արդարացիորեն կասկածի տակ է դրվում հետազոտությունների օբյեկտիվությունը:

Վերջին տարիներին պարբերաբար արձանագրվող խնդիրներից է նաև զորակոչիկի սեփական միջոցներով մասնավոր կլինիկաներում անցած հետազոտությունների արդյունքները հաշվի չառնելը զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովի կողմից, պատճառաբանությամբ, որ իբր զորակոչիկները կարող են հանցավոր համաձայնության եկած լինել բուժաշխատողների հետ՝ որպես ախտորոշում ստանալով իրենց ցանկացած տվյալները: Մինչդեռ իրական խնդիրն այն է, որ զորակոչիկները ստիպված են լինում հետազոտությունները սեփական միջոցներով անցնել, քանի որ զորակոչի շրջանակներում բժշկական հանձնաժողովի

կողմից առողջական բոլոր խնդիրների կապակցությամբ չեն ուղեգրվել համապատասխան հետազոտությունների:

ՀՀ պաշտպանության նախարարությանը հղում կատարելով ՀՀ ՄԻՊ գրասենյակի կողմից հրապարակված տվյալների համաձայն՝ 2024 թվականի ընթացքում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կայացրած 156 եզրակացություն բողոքարկվել է ՀՀ պաշտպանության նախարարին, որոնցից 64 դիմումների վերաբերյալ նշանակվել է լրացուցիչ քննություն, որի արդյունքում 14 եզրակացություն փոխվել է:

2024 թ. ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից 9 զորակոչիկի վերաբերյալ Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կայացրած եզրակացություն բողոքարկվել է վերադասության կարգով՝ ՀՀ պաշըտպանության նախարարին, ինչի արդյունքում 4 զորակոչիկի վերաբերյալ կայացված եզրակացությունները փոխվել են:

Մեկ այլ չլուծվող խնդիր է զորակոչային տարիքի քաղաքացիների՝ բժշկական հաստատություններում հետազոտություններ անցնելու սահմանափակումները կամ անհնարինությունը, նույնիսկ այն դեպքերում, երբ զորակոչիկին տրամադրվում է տարկետում հերթական զորակոչից:

Դեռևս 2023 թվականից Կազմակերպությունը բարձրաձայնում է նշված խնդրի մասին: 2023 և 2024 թվականներին ՀՀ առողջապահության նախարարության հետ քննարկումների ընթացքում ձեռք բերվեց պայմանավորվածություն՝ յուրաքանչյուր խնդրի մասին առողջապահության նախարարությանը տեղեկացնելու, թե որ բուժհաստատությունն է մերժել հետազոտության իրականացումը: Այդպիսով, ՀՀ առողջապահության նախարարությանը հասցեագրված բազմաթիվ դիմումներում Կազմակերպությունն արձանագրել է, որ բուժհաստատությունները հրաժարվելով զորակոչիկներին ենթարկել հետազոտությունների, հղում են կատարում ՀՀ առողջապահության նախարարի «ինչ-որ հրամանի»: Առողջապահության նախարարությունը, սակայն, հերքել է նման հրամանի առկայությունը: Այնուամենայնիվ, զորակոչիկների շարունակական բնույթ կրող ահազանգերը վկայում են այն մասին գործնականում զորակոչային տարիքի քաղաքացիները շարունակում են բախվել նմանատիպ խնդիրների: **Հաշվի առնելով այն փաստը, որ զինկոմիսարատները ոչ միշտ են հիմք ընդունում զորակոչիկների բանավոր**

գանգատները, բախվում ենք մի իրավիճակի, որտեղ զորակոչիկը բանավոր, զինկոմիսարիատի համար ոչ բավարար հիմնավոր գանգատների հիման վրա չի ուղեգրվում հետազոտությունների, իսկ սեփական նախաձեռնությամբ և միջոցներով հետազոտության ենթարկվել չի կարող, քանի որ զորակոչային տարիքի անձ լինելու հանգամանքով պայմանավորված բժշկական հաստատություններո հրաժարվում են զորակոչիկին հետազոտել:

2023 թվականին գործարկվեց առողջապահության ԱՐՄԵԴ էլեկտրոնային համակարգը, որով նախատեսվում էր զորակոչիկներին էլեկտրոնային տարբերակով հասանելություն տալ զինկոմիսարիատի կողմից տրված ուղեգրումներին, ինչպես նաև իրենց առողջական վիճակի հետազոտությունների արդյունքներին՝ հնարավորություն ընձեռելով վերջիններիս անհամաձայնության դեպքում առավել արագ կազմակերպել բողոքարկման գործընթացը՝ խուսափելով զինկոմիսարիատներից բանավոր կամ գրավոր կերպով հետազոտությունների արդյունքները պահանջելուց: **Սակայն համակարգի գործարկումից մինչ օրս առկա են մի շարք խնդիրներ, որոնք դեռևս լուծում չեն ստացել:** Կազմակերպությանը դիմած զորակոչիկների ահազանգերը վերաբերել են էլեկտրոնային հարթակում տեղադրված փաստաթղթերի թերի լինելուն կամ դրանց բացակայությանը նույնիսկ հետազոտության իրականացումից տևական ժամանակ անց: Նման դեպքերում զորակոչիկները ստիպված են եղել դիմել իրենց հաշվառման զինկոմիսարատ և այնտեղից պահանջել հետազոտության արդյունքները: Բացի այդ «Արմեդ» հավելվածում բացակայում են նախորդ տարիներին իրականացված հետազոտությունները, եթե զորակոչիկը նախորդ զորակոչերին անցել է հետազոտություններ, ինչպես նաև Կենտրոնական բժշկական հանձնաժողովի որոշումները, որոնք «Արմեդ» հավելվածում առհասարակ չեն տեղադրվում:

Բացի նշված պարբերական խնդիրներից 2012 թվականից[29] Կազմակերպությունը բազմիցս անդրադարձել է մի քանի առողջական խնդրով զորակոչիկների խնդրին, առաջարկելով անձի մոտ մի քանի հիվանդությունների առկայության դեպքում դրանք դիտարկել ոչ թե միմյանցից մեկուսի, այլ միասին և

[29] ՀՔԱՎ Զեկույց առողջական 2012.pdf , ՀՔԱՎ Զեկույց առողջական 2012.pdf , The “Helsinki Citizens` Assembly (HCA) - Vanadzor” was founded on 21 March, 1998, as a branch of the Armenian Committee of the , The “Helsinki Citizens` Assembly (HCA) - Vanadzor” was founded on 21 March, 1998, as a branch of the Armenian Committee of the , 2016 թ. ձմեռային և 2017 թ. ամառային զորակոչերի ընթացքում զորակոչիկների իրավունքների վիճակի մասին-25-12-17.pdf - Google Drive , Զեկույց-զորակոչ -2017 ձմեռային-2018 ամառային.pdf - Google Drive , Զորակոչ -2019-ձմեռ-2020-ամառ-2020-ձմեռ-2021-ամառ.pdf

գնահատել դրանց ազդեցությունը անձի ընդհանուր ֆունկցիոնալության վրա՝ հաշվի առնելով առողջական վիճակի հնարավոր վատթարացման ռիսկերը: Այնուամենայնիվ մինչ օրս խնդրին որևէ լուծում չի տրվել:

ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը 2024 թվականի իր տարեկան հաղորդման[30] մեջ նույնպես անդրադարձել է վերոնշյալ խնդիրներին:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության հետ կապված խնդիրներ

Այլընտրանքային աշխատանքային ծառայության անցնելու վերաբերյալ հարցերով խորհրդատվության համար 2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում Կազմակերպությանը դիմել է 1 զորակոչիկ և 1 զինվորական հաշվառման ենթակա քաղաքացի:

Օրենքի 3-րդ հոդվածով սահմանվում են այլընտրանքային ծառայության անցնելու հիմքերը՝

1. Այլընտրանքային զինվորական ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում են միայն զենք կրելը, պահելը, պահպանելը կամ օգտագործելը:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության կարող է անցնել Հայաստանի Հանրապետության այն քաղաքացին, որի կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասում է ընդհանրապես զինվորական ծառայություն անցնելը:

2. Պարտադիր զինվորական ծառայություն անցնող Հայաստանի Հանրապետության քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել այլընտրանքային ծառայությունը, իսկ այլընտրանքային ծառայություն անցնող քաղաքացին չի կարող հրաժարվել իր ծառայությունից և ընտրել պարտադիր զինվորական ծառայությունը[31]:

Նույն օրենքի 4-րդ հոդվածի համաձայն. «Այլընտրանքային ծառայության ուղարկվում է այն քաղաքացին, որը մինչև հերթական զորակոչին նախորդող փետրվարի 1-ը կամ օգոստոսի 1-ը սույն օրենքի 3-րդ հոդվածի 1-ին մասով

[30] ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf
[31] arlis.am/documentview.aspx?docid=83415

նախատեսված հիմքով պարտադիր զինվորական ծառայությունն այլընտրանքային ծառայությամբ փոխարինելու մասին դիմել է այն տարածքային զինվորական կոմիսարիատ, որտեղ նա հաշվառված է, և որին հանձնաժողովը (այսուհետ՝ Հանձնաժողով) որոշել է ուղարկել այլընտրանքային ծառայության»:

Գործնականում, սակայն, առկա են այլընտրանքային ծառայության կազմակերպման հետ կապված մի շարք խնդիրներ. մասնավորապես, չնայած 3-րդ հոդվածում որպես այլընտրանքային ծառայության անցնելու հիմք նշված է «կրոնական դավանանքին կամ համոզմունքներին հակասությունը», այնուամենայնիվ Այլընտրանքային ծառայության հարցերով Հանձնաժողովի կողմից դիտարկվում են միայն այն դեպքերը, երբ զորակոչիկները կրոնական դավանանքով պայմանավորված չեն կարող անցնել զինվորական ծառայություն, իսկ համոզմունքներով պայմանավորված անձինք գործնականում հնարավորություն չունեն անցնելու այլընտրանային ծառայության: Փաստացի ստացվում է, որ պացիֆիստական/խաղաղասիրական գաղափարախոսություն կրող զորակոչային տարիքի անձը զրկված է այլընտրանքային ծառայության իրավունքից, քանի որ չկան անձի պացիֆիստական հյամոզմունքներ ունենալու ստուգման մեխանիզմներ: Միևնույն ժամանակ ներկայումս գործնականում Հայաստանում միայն «Եհովայի վկաներ» կրոնական կազմակերպության ներկայացուցիչներն են կարողանում իրացնել այլընտրանքային ծառայության իրավունքը:

Այլընտրանքային աշխատանքային ծառայության վերաբերյալ խնդիրներին իր տարեկան հաղորդման մեջ անդրադարձել է նաև ՀՀ Մարդու իրավունքների պաշտպանը[32]:

Պահեստազորայինների վարժական հավաքներ

2024 թվականին վարժական հավաքների կազմակերպման ընթացքում պահեստազորայինները շարունակել են ահազանգել ծանուցման ժամկետների, ընտանեկան դրությամբ պայմանավորված վարժական հավաքների ներգրավվելու ժամկետների փոփոխության հնարավորության, առողջական վիճակի ոչ պատշաճ հետազոտությունների իրականացման վերաբերյալ հարցերով:

[32] https://www.ombuds.am/images/files/4d1335361f1f7e9fbcc1cfc10679701e.pdf

2024 թվականին փոփոխություն կատարվեց պահեստազորում հաշվառված քաղաքացիներին վարժական հավաքներին ներգրավելու համար տրամադրվող ծանուցման կարգի մեջ: Մասնավորապես, սահմանվեց, որ *«քաղաքացուն պատշաճ ծանուցում է համարվում ծանուցագիրը փաստաթղթային կամ փոստային կապի միջոցով կամ անհատական կամ հրապարակային եղանակով»* տրամադրելը: Նման ձևերով ծանուցումից հետո չներկայանալու դեպքում նախատեսված է պատասխանատվություն ՀՀ քրեական օրենսգրքի 462-րդ հոդվածով սահմանված կարգով, այն է՝ տուգանք առավելագույնը քսանապատիկի չափով, կամ կարճաժամկետ ազատազրկում՝ առավելագույնը երկու ամիս ժամկետով, կամ ազատազրկում՝ առավելագույնը երկու տարի ժամկետով:

Նախկինում նախատեսված էր վարժական հավաքների ներգրավվելուց առաջ «առնվազն 20 օր շուտ » ծանուցման ժամկետ որը ներկայումս հանվել է Օրենքից:

Հատկանշական է նաև, որ դեռևս 2022 թ. հոկտեմբերի 13-ին Կառավարության հերթական նիստի ժամանակ ՀՀ ՊՆ Սուրեն Պապիկյանը հայտարարեց[33], որ զինապարտ քաղաքացիներին հնարավորություն է ընձեռվելու ընտրել վարժական հավաքներին մասնակցելու ժամկետը, մինչդեռ Կազմակերպության ստացած ահազարգերը վկայում են այն մասին, որ վարժական հավաքների մասնակիցները գործնականում չեն կարողանում օգտվել նման հնարավորությունից, և Կազմակերպության դիմումներին ի պատասխան ՀՀ Պաշտպանության նախարարության կողմից հղում է արվում միայն «Պաշտպանության մասին» ՀՀ օրենքի 23-րդ հոդվածի 4-րդ մասին[34], ինչպես նաեւ **առողջական վիճակի պատճառով վարժական հավաքներին ոչ ենթակա ճանաչվելու** հանգամանքին, նշելով, որ որեւէ այլ հիմք նախատեսված չէ պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումներին չկանչվելու եւ վարժական հավաքներից ազատվելու համար: Փաստացի, ՀՀ պաշտպանության նախարարությունն իր պատասխաններում չի անդրադառնում անձին վարժական հավաքներին ներգրավելու ժամկետների փոփոխության հնարավորությանը, այլ պարզապես հղում է կատարում օրենքի դրույթներին, որոնցով անձինք ճանաչվում են ոչ ենթակա վարժական հավաքներին: Արդյունքում պահեստազորում հաշվառված

[33] https://www.primeminister.am/hy/press-release/item/2022/10/13/Cabinet-meeting/
[34] https://www.arlis.am/documentview.aspx?docid=203932

քաղաքացիներին գործնականում հնարավորություն չի ընձեռվում ընտրելու վարժական հավաքներին ներգրավվելու ժամանակահատվածը, ինչի հետևանքով նրանք մի շարք խնդիրներ են ունենում թե աշխատանքային, թե ընտանեկան դրությամբ, թե տնտեսական գործունեությամբ պայմանավորված խնդիրների լուծման առումով:

Ներկայումս օրենսդրորեն ամրագրված չեն վարժական հավաքներին ներգրավվող քաղաքացիների ընտրության չափանիշները՝ ըստ մասնագիտացման, ինչպես նաև ըստ ընտանեկան դրության, աշխատանքի բնույթի եւ այլ հանգամանքների: Նման չափանիշների բացակայությունը կարող է առաջացնել կոռուպցիոն ռիսկեր՝ պայմանավորված անձանց վարժական հավաքին ներգրավելու հայեցողական մոտեցմամբ:

Կազմակերպությանը դիմած քաղաքացիները մտահոգություն են հայտնում վարժական հավաքների մասնակիցներին մարտական հերթապահության նշանակման վերաբերյալ: «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. N 1174 որոշմամբ սահմանվում է, որ «Վարժական հավաքները պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների ներգրավվումն է կարճաժամկետ զինվորական ծառայության՝ նրանց ռազմական ունակությունները կատարելագործելու և վերապատրաստելու նպատակով:» Այսինքն՝ վարժական հավաքների նպատակն է պահեստազորայինների վերապատրաստումները, մինչդեռ վարժական հավաքների ընթացքում մարտական հերթապահության իրականացումը չի կարող համարվել վերապատրաաստում մի շարք պատճառներով: Մասնավորապես՝ վարժական հավաքներին ներգրավվողները որպես կանոն այն անձինք են, ովքեր զինվորական ծառայություն, այդ թվում նաև մարտական հերթապահություն են իրականացրել տարիներ առաջ՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում: Ոմանք նույնիսկ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում ընդհանրապես չեն ներգրավվել մարտական հերթապահության մեջ, հետևաբար գործնականում վարժական հավաքների ընթացքում 7 օր պատրաստություն անցնելուց հետո 14 օր մարտական հերթապահության իրականացումը նշանակում է

առանց որևէ պատրաստության մարտական հերթապահության իրականացում, որը չափազանց մեծ ռիսկեր է պարունակում մարտական կամ պատերազմական գործողությունների մեկնարկի դեպքում, եթե առաջնագծում գտնվող զինծառայողները չունեն պատշաճ մակարդակի մարտական պատրաստվածություն: Այդ մասին են վկայում վարժական հավաքների ընթացքում պահեստազորայինների կողմից զենքի օգտագործման կանոնների խախտումների և դրանց հետևանքով ծառայակցին վնասվածք հասցնելու դեպքերը, ինչպես նաև մարտական հերթապահություն կամ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման դեպքերը:

Մասնավորապես 2021 թ. մեկ պահեստազորային զինծառայող մահացել է պահեստազորայինների եռամսյա վարժական հավաքների ընթացում՝ ծառայակցի կողմից մարտական ծառայության կազմակերպման կանոնների խախտման հետևանքով[35]:

Բացի այդ, Օրենքով ամրագրված չէ վարժական հավաքից խուսափած անձանց քրեական պատասխանատվությունից ազատվելու դրույթը կամովին ներկայանալու և վարժական հավաքների ենթարկվելու դեպքում, որպիսին սահմանված է պարտադիր ժամկետային զինվորական և այլընտրանքային ծառայության դեպքում:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օերնքով սահմանված կարգով պահեստազորում հաշվառված քաղաքացիների «պատշաճ ծանուցում է համարվում ծանուցագիրը փաստաթղթային կամ փոստային կապի միջոցով կամ անհատական կամ հրապարակային եղանակով տրամադրելը»: Կազմակերպություն դիմած պահեստազորայիններից մեկը դժգոհություն է հայտնել այն կապակցությամբ, որ վարժական հավաքներին իրեն ներգրավելու վերաբերյալ ծանուցումն ուղարկվում է իր աշխատանքի վայր՝ իր գործատուին, ով ստանում է այն իր փոխարեն, ինչը օրենքով սահմանված ծանուցման ձև չի:

Զինվորական վարժանքների կամ զորավարժությունների մասնակցելու ընթացքում քաղաքացու հիմնական աշխատանքի վայրում (անկախ կազմակերպական-իրավական ձևից) պահպանվում է քաղաքացու աշխատատեղը (պաշտոնը) և միջին աշխատավարձը

[35] https://www.mil.am/hy/news/9928?fbclid=IwAR1cbbMk5Zviqe4Dm-QG5thGjz_bGXxogqJ2-arSy7L5iTrV0RI8KnkZcr0

Ինչպես նախկին տարիներին, այժմ ևս պահեստազորում հաշվառված անձինք ենթարկվում են թերի բժշկական հետազոտությունների, իսկ նրանց ներկայացրած գանգատներին ի պատասխան հորդորում են ներկայացնել սեփական միջոցներով իրականացված բժշկական զննությունների արդյունքները: Սույն մոտեցումը խնդրահարույց է այն իմաստով, որ սեփական միջոցներով բժշկական հետազոտություններ անցնելու հնարավորություն չունեցող անձինք կարող են ներգրավվել վարժական հավաքներին առողջական խնդիրներով: Ի դեպ, թերի բժշկական հետազոտությունների իրականացման հետևանքով վարժական հավաքներին մասնակցելու ընթացքում արձանագրվել են պահեստազորայինների մահացության դեպքեր՝ առողջական պատճառներով:

Օրինակ, *2022 թ. օգոստոսի 3-ի լույս 4-ի գիշերը քնած ժամանակ հանկարծամահ է եղել եռամսյա վարժական հավաքի մասնակից, պահեստազորային շարքային Ռազմիկի Հարությունյանը (ծնվ. 1978թ.)*[36]: ՀՀ ՊՆ խոսնակ Արամ Թորոսյանը Yerevan.Today-ի հետ զրույցում հայտնել է[37], որ եռամսյա վարժական հավաքների բոլոր մասնակիցները ըստ ընթացակարգի անցել են բուժզննություն, սակայն նշել է, որ չի կարող ասել արդյոք պահեստազորայինը զինկոմիսարիատին ներկայացրել է իր առողջական վիճակի կամ գանգատների մասին բժշկական փաստաթղթեր, թե ոչ:

Մեկ այլ խնդիր է այն, որ բարձր աշխատավարձ ստացող և վարկային կամ հիփոթեքային պարտավորություններ ունեցող քաղաքացիները, հատկապես՝ անհատ ձեռներեցները, վարժական հավաքների ներգրավելու դեպքում ունենում են ֆինանսական խնդիրներ վարկերը մարելիս: «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 59-րդ հոդվածի համաձայն՝ «Վարժական հավաքի ընթացքում... քաղաքացուն ...հաշվարկվում է նշանակված զինվորական պաշտոնի համար նախատեսված պաշտոնային դրույքաչափ», իսկ ՀՀ «Աշխատանքային օրենսգրքի» 124-րդ հոդվածի 2.1 մասին համաձայն՝ *«2.1. Աշխատողին վարժական հավաքների ներգրավելիս պետական կամ տարածքային կառավարման կամ տեղական ինքնակառավարման մարմին, պետական կամ համայնքային կազմակերպություն կամ հիմնարկ չհանդիսացող գործատուն*

[36] https://mil.am/hy/news/10908
[37] https://yerevan.today/all/society/108994/pn-parzabanoumy%D5%9D-eramsya-havaqi-masnakci-mahvan-veraberyal

առաջին 30 օրացուցային օրերի ընթացքում շարունակում է վճարել յուրաքանչյուր աշխատանքային օրվա համար աշխատողի հիմնական աշխատավարձի (գործավարձով վարձատրվող աշխատողների դեպքում՝ միջին աշխատավարձի, բացառությամբ պարգևատրման գումարների) և այդ ընթացքում վարժական հավաքներին մասնակցելու օրացուցային օրերի համար աշխատողին որպես զինծառայող հաշվարկված դրամական ապահովության առնվազն դրական տարբերությունը...»: Նշված դրամական ապահովությունը որոշ դեպքերում մեծապես տարբերվում է քաղաքացու ամսական աշխատավարձի չափից այն պատճառով, որ վերջինիս եկամուտը գոյանում է աշխատավայրում գտնվելու յուրաքանչյուր օրվա եկամտի հանրագումարից, ինչը հանգեցնում է քաղաքացու կողմից իր կամքից անկախ վարկային կամ այլ ֆինանսական պարտավորությունների չկատարմանը:

Գործնականում չի կիրառվում «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 18-ի N 1174-Ն որոշման այն դրույթը, համաձայն որի՝ «Վարժական հավաքների կանչվում են պահեստազորի առաջին խմբում հաշվառված այն պահեստազորայինները, որոնք **ունեն համապատասխան զինվորական կամ քաղաքացիական մասնագիտություն կամ դրանց հարակից մասնագիտություններ** և պիտանի են զինվորական ծառայության համար:» Պահեստազորում հաշվառված անձանց վարժական հավաքներին ներգրավելիս պետք է նաև հաշվի առնել վերջիններիս քաղաքացիական մասնագիտությունը և փորձառությունը, ելնելով այն հիմնավորումից, որ տարիներ առաջ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո նրանք հմտացել են ոչ թե զինվորական, այլ քաղաքացիական մասնագիտության մեջ, առավել մեծ փորձառություն ունեն դրանում և իրենց մասնագիտական ներուժն ու փորձառությունը կարող են առավել արդյունավետ օգտագործել պետության պաշտպանության և անվտանգության ապահովման գործում:

Այսպիսով, ակնհայտ է, որ վարժական հավաքների ներկայիս կազմակերպումը չի ապահովում քաղաքացիների իրավունքների լիարժեք պաշտպանությունը՝ պայմանավորված օրենսդրական բացերով, անհստակ ընթացակարգերով և առկա կարգավորումների ոչ թափանցիկ կիրառմամբ: Հետևաբար անհրաժեշտ է կատարել

իրավական ու գործնական բարեփոխումներ՝ վարժական հավաքների կազմակերպման, իրականացման գործընթացն առավել կանխատեսելի և իրավական որոշակիության սկզբունքին համապատասխանեցնելու համար:

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ԴԻՄԱԾ ԱՆՁԱՆՑ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԻ ՊԱՇՏՊԱՆՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՈՎ ՏՐԱՄԱԴՐՎԱԾ ԻՐԱՎԱԿԱՆ ԱՋԱԿՑՈՒԹՅԱՆ ԱՐԴՅՈՒՆՔՆԵՐԸ

2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում Կազմակերպությանը դիմած զորակոչիկներից

- 9-ին տրամադրվել է տարկետում մինչև 1 տարի ժամկետով՝ բուժման նպատակով,
- 4-ը ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար՝ առողջական վիճակի պատճառով,
- 4-ը ազատվել են զինվորական ծառայությունից՝ առողջական վիճակի պատճառով:

Պահեստազորում հաշվառված երկու անձինք, ովքեր առողջական վիճակի թերի հետազոտությունների հիման վրա ճանաչվել են «ենթակա վարժական հավաքների» Կազմակերպության դիմումի հիման վրա չեն կանչվել վարժական հավաքների:

Կազմակերպության դիմումի հիման վրա ևս մեկ պահեստազորայինի վարժական հավաքներին ներգրավելու ժամկետը հետաձգվել է, տեղափոխվելով իրեն առավել հարմար ժամանակահատված:

Հարկ է նշել, որ բացի 2024 թ. ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում դիմած զորակոչիկներից, Կազմակերպությունը նշված ժամանակահատվածում շարունակել է զբաղվել նաև նախկինում դիմած 4 զորակոչիկների գործերով:

Վերջիններիս թվում են այն զորակոչիկները, ովքեր համաձայն չլինելով առողջական վիճակի հետազոտության արդյունքների հետ, Կազմակերպության աջակցությամբ բողոքարկել են զինվորական ծառայությանն իրենց պիտանիության մասին որոշումների օրինականությունը ըստ վերադասության կամ դատական կարգով:

Այսպիսով, նախկինում դիմած **4 զորակոչիկներից**

- 3-ի գործով բողոքարկվում են առողջական վիճակի հիմքով զինծառայության պիտանիության վերաբերալ ԿԲՀ որոշումները,
- 1 զորակոչիկի գործով Կազմակերպության կողմից դատական կարգով ներկայացվել է զինվորական ծառայությանը պիտանիության վերաբերյալ որոշման անվավեր ճանաչելու վերաբերյալ պահանջ (զորակոչվելուց և վաղաժամ զորացրվելուց հետո):

ԵԶՐԱՀԱՆԳՈՒՄՆԵՐ / ԽՆԴԻՐՆԵՐ

2024 թվականի ամառային և ձմեռային զորակոչերի ընթացքում ի թիվս նոր խնդիրների, արձանագրվել են նաև ՀՔԱ Վանաձորի գրասենյակի կողմից տարիներ շարունակ բարձրաձայնվող խնդիրները, որոնք մինչ այժմ լուծում չեն ստացել: Ստորև ներկայացնում ենք արձանագրված խնդիրները զորակոչը, վարժական հավաքները կարգավորող օրենսդրական բացերի, դրանց կազմակերպման և իրականացման գործընթացի վերաբերյալ:

ՊԱՐՏԱԴԻՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉ

Օրենսդրական խնդիրներ

1. Պաշտպանական համակարգում կոռուպցիոն ռիսկերի նվազեցումը փորձ է արվում լուծել պարտադիր ժամկետային զինվորական ծառայության համար քաղաքացու պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի փոփոխությամբ և լուրջ առողջական խնդիրներով զորակոչիկներին առանց պատշաճ և թանկարժեք բժշկական հետազոտությունների իրականացման զինվորական ծառայությանը պիտանի ճանաչելով և զորակոչելով:
2. Օրենքով ամրագրված չեն պարտադիր ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչի ընթացքում զինվորական ծառայությանը զորակոչիկին պիտանի ճանաչելու վերաբերյալ ընդունված վարչական ակտերի՝ ԿԲՀ եզրակացությունների, գործողության կամ անգործության դեմ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված գործերի քննության և դրա շրջանակներում նշանակված դատաբժշկական փորձաքննությունների կատարման այնպիսի ժամկետներ, որպեսզի վերջնական դատական ակտը ուժի մեջ մտնի մինչև զորակոչի ավարտը:
3. 2024 թվականին ՀՀ կառավարության 2018 թ. N 404-Ն որոշման մեջ 7 հոդվածներում կատարված փոփոխությունները պարտադիր ժամկետային զինվորական ծառայության համար քաղաքացու զինվորական ծառայությանը պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկի վերաբերյալ չեն համապատասխանում զորակոչիկների և զինծառայողների մարդու իրավունքների

պաշտպանության բնագավառում պետության ստանձնած պարտավորություններին: Դրանք միտված են զինվորական ծառայության համար պիտանի ճանաչվող զորակոչիկների թվաքանակի ավելացմանը՝ անտեսելով վերջիններիս մոտ առկա առողջական խնդիրները, ինչը մեծացնում է առողջական խնդիրներով զինվորական ծառայության զորակոչված անձանց առողջական վիճակի վատթարացման ռիսկերը, հետևաբար բացասական ազդեցություն է ունենում նրանց զինվորական պարտականությունների արդյունավետ կատարման վրա, ոչը հանգեցնում է զինծառայողների մարդու իրավունքների խախտումներին:

Առողջական խնդիրների վատթարացման ռիսկերի մեծացման վառ օրինակ է մտավոր հետամնացություն ունեցող անձանց զինվորական ծառայության զորակոչելը, ինչը նաև խտրական վերաբերմունք և տարբերակված մոտեցում է այն զորակոչիկների նկատմամբ, ովքեր ներկայումս ճանաչվում են սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար, մինչդեռ նախկինում՝ 2019 թվականի հուլիսի 25-ից մինչև 2024 թվականի ապրիլի 18-ն ընկած ժամանակահատվածում նույն խնդիրով զորակոչիկները ճանաչվում էին ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

4. Զինվորական ծառայության զորակոչվելուց առաջ և դրա ավարտից հետո որոշ զինծառայողների մոտ արձանագրվում է առողջական վիճակի վատթարացում, մինչդեռ օրենքով դեռևս ամրագրված չէ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց առաջ զինծառայողների առողջական վիճակի պատշաճ և համալիր հետազոտության իրականացման վերաբերյալ դրույթը, որպիսին առկա է զորակոչի դեպքում:

Գործնականում առկա խնդիրներ

Առողջական վիճակի թերի հետազոտությունների իրականացման խնդիրներ

1. Զորակոչիկների գանգատները շարունակում են անտեսվել, զինվորական բժշկական հանձնաժողովները զորակոչիկներին ոչ բոլոր առողջական խնդիրների հիման վրա են ուղեգրում բժշկական զննությունների և չի իրականացվում զորակոչիկների առողջական վիճակի ամբողջական, համալիր հետազոտություն, ինչի արդյունքում զինվորական ծառայությանը զորակոչիկի պիտանիության մասին

որոշումը փաստացի կայացվում է առողջական վիճակի թերի հետազոտությունների հիման վրա:

2. Զորակոչային բժշկական հանձնաժողովները զորակոչիկներին առողջական վիճակի հետազոտությունների ուղեգրելիս հիմնվում են միայն զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ պոլիկլինիկայի ամբուլատոր քարտում առկա տվյալների վրա, մինչդեռ խնդիրն այն է, որ որոշ զորակոչիկների գանգատները պոլիկլինիկաներում չեն արձանագրվում և արդյունքում զորակոչիկների առողջական խնդիրների մի մասը մնում է չբացահայտված:

3. Անտեսվում են զինվորական ծառայությանը զորակոչիկների պիտանիության սահմանման համար որոշիչ նշանակություն ունեցող առողջական խնդիրները:

*** Որպես դրական փոփոխություն նշենք, որ վերջին տարիներին Կազմակերպությունն արձանագրել է, որ առանձին դեպքերում զորակոչային բժշկական հանձնաժողովներն իրենք են բժշկական հետազոտությունների արդյունքում բացահայտում զորակոչիկների լուրջ առողջական խնդիրները, որոնց մասին նույնիսկ իրենք՝ զորակոչիկները տեղեկացված չեն եղել: Զորակոչի գործընթացքի պատշաճ իրականացման ապահովման հարցում սույն մոտեցումը չափազանց կարևոր գնահատելով հանդերձ, արձանագրում ենք, որ նման դեպքերը կրում են եզակի բնույթ՝ մեծապես զիջելով թերի հետազոտությունների իրականացման արդյունքում զորակոչիկներին պիտանի ճանաչելու արատավոր պրակտիկային:**

4. Զորակոչային բժշկական հանձնաժողովների կողմից հակասական մոտեցում է դրսևորվում զորակոչիկների՝ սեփական ֆինանսական միջոցներով բժշկական հետազոտությունների իրականացման հարցում: Մասնավորապես, որոշ զինկոմիսարիատներում զորակոչիկներին հայտնում են առողջական խնդիրների առկայության վերաբերյալ սեփական միջոցներով իրականացված բժշկական հետազոտությունների ներկայացման անհրաժեշտության մասին, մինչդեռ այլ զինկոմիսարիատներում հրաժարվում են ընդունել զորակոչիկների սեփական միջոցներով իրականացված բժշկական հետազոտության արդյունքները՝ պատճառաբանելով, որ դրանք, իբր, կարող են կեղծված լինել զորակոչիկների կողմից՝ «բժիշկների հետ համագործակցության արդյունքում»: Ստեղծվում է իրավիճակ, երբ մի կողմից առողջական խնդիրը չի բացահայտվում զորակոչի շրջանակներում

իրականացված բժշկական հետազոտությունների ընթացքում, իսկ մյուս կողմից զորակոչիկի ներկայացրած առողջական վիճակի հետազոտության արդյունքները հաշվի չեն առնվում Կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից՝ կասկածի տակ դնելով դրանց օրինականությունը: Արդյունքում առողջական խնդիր ունեցող զորակոչիկի՝ զինվորական ծառայությանը պիտանիության մասին որոշումը կայացվում է բժշկական թերի հետազոտությունների հիման վրա:

5. Բժշկական հաստատությունները շարունակում են հրաժարվել զորակոչային տարիքի անձանց իրենց սեփական ֆինանսական միջոցներով հետազոտելուց, նշելով, որ կա «հստակ ցուցում չհետազոտելու 17 տարեկանից բարձր արական սեռի քաղաքացիներին»:

6. Եզակի դեպքերում, երբ բժիշկն ի սկզբանե տեղեկացված չէ սեփական ֆինանսական միջոցներով հետազոտվող անձի զորակոչիկ լինելու հանգամանքի մասին և հետազոտելուց հետո է միայն տեղեկանում այդ մասին, հայտնում է, որ «չի կարող արձանագրել իր նկատած բոլոր խնդիրները», քանի որ մտահոգություն ունի, որ այդ պարագայում «կարող է խնդիր ունենալ»:

7. Որոշ քաղաքացիական բժշկական հաստատություններ զորակոչային տարիքի անձանց հետազոտում և բուժում են իրականացնում միայն զինկոմիսարիատների կողմից տրված ուղեգրերի հիման վրա: Որոշ դեպքերում հրատապ բուժում պահանջող առողջական խնդիրներով զորակոչիկներին հրաժարվում են ընդունել բուժհաստատություններում նույնիսկ սեփական ֆինանսական միջոցներով, հորդորելով ներկայացնել զինկոմիսարիատի կողմից տրված ուղեգիրը: Արդյունքում նույնիսկ հրատապ բուժում պահանջող առողջական խնդրով, օրինակ՝ թոքաբորբ ունեցող զորակոչիկը ստիպված է սպասել շուրջ 20 օր, որպեսզի զինկոմիսարիատից ստանա ուղեգիր հետազոտվելու համար:

8. Մի քանի առողջական խնդիր ունեցող զորակոչիկներն առնչվում են բժշկական թերի հետազոտությունների հետ կապված խնդրի մեկ այլ դրսևորմանը: Առողջական խնդիրներից մի քանիսով հետազոտվելու համար ուղեգիր ստանալուց հետո, երբ զորակոչիկը պահանջ է ներկայացնում իր բոլոր առողջական խնդիրների կապակցությամբ իրեն հետազոտելու մասին, զինկոմիսարիատում զորակոչիկին հայտնում են, որ նա արդեն իսկ ունի բազմաթիվ ուղեգրեր և նոր ուղեգրերի կարիք չկա: Փաստացի, հաշվի առնվում այն հանգամանքը, որ ուղեգրերը խնդիրներից միայն

մեկ կամ մի քանիսի հետազոտության նպատակով են: Մինչդեռ մյուս առողջական խնդիրների կապակցությամբ զորակոչիկները չեն ուղեգրվում հետազոտությունների, ինչի արդյունքում պիտանիության մասին որոշումը կայացվում է զորակոչիկների առողջական վիճակի ոչ ամբողջական հետազոտությունների հիման վրա:

9. Զորակոչիկներին փորձաքննելիս հաշվի չի առնվում սեզոնային հիվանդությունների առավել ցայտուն արտահայտման ժամանակահատվածում վերջիններիս բժշկական փորձաքննության ենթարկելու կարևորությունը, և նրանք փորձաքննվում են իրենց առողջական խնդրի մեղմ դրսևորման ժամանակահատվածում, ինչի արդյունքում զինվորական ծառայության ընթացքում նրանց առողջական վիճակը վատթարանում է զորակոչվելուց ամիսներ անց:

Գործնականում առկա այլ խնդիրներ

10. Անձի մոտ 5 և ավելի հիվանդության առկայության դեպքում ԿԲՀ-ի կողմից շեշտը դրվում է միայն հիվանդությունների քանակի վրա, և նույն անձի մոտ զուգահեռաբար մի քանի հիվանդության պարագայում հնարավոր ծանրաբեռնվածության և ընդհանուր առողջական վիճակի և դրա հնարավոր վատթարացման հանգամանքը շարունակվում է չդիտարկվել:

11. Միաժամանակ մի քանի հիվանդության դեպքում չեն սահմանվում զինվորական ծառայությանը անձի պիտանիությունը որոշելու իրավական հիմքերը. անձի մոտ առկա հիվանդությունները դիտարկվում են մեկը մյուսից առանձին, չդիտարկելով անձի առողջական վիճակի ողջ պատկերը և զինվորական ծառայության պարտականությունների կատարման համար պիտանիությունը:

12. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից մեկ կամ ավելի անգամ բուժման նպատակով տարկետում ստացած զորակոչիկները տարկետման ժամանակահատվածում առանց բուժում ստանալու և առանց առողջական վիճակի բարելավման հաջորդ հերթական զորչակոչին ճանաչվում են պիտանի կամ սահամնափակումով պիտանի զինվորական ծառայության համար և զորակոչվում են զինվորական ծառայության, ինչը վերստին առողջական վիճակի վատթարացման ռիսկեր է պարունակում:

13. Որևէ կերպ հիմնավորված չէ հետազոտության արդյունքները բողոքարկելու դեպքում զորակոչիկին ստուգիչ հետազոտության համար կրկին նույն բժշկի մոտ

ուղեգրելու պրակտիկան. ակնհայտ է, որ նույն բժիշկը կաշկանդված կլինի նախկինում իր տված ախտորոշումից տարբերվող ախտորոշում արձանագրել:

14. Զորակոչիկների բժշկական հետազոտությունների ընթացքում չի ապահովվում անձի գաղտնիության իրավունքը. զորակոչիկների արտաքին մարմնական զննությունն իրականացվում է այլ զորակոչիկների ներկայությամբ:

15. ԱՐՄԵԴ հավելվածը, որը նախատեսված է զորակոչիկների առողջական վիճակի վերաբերյալ փատաթղթերի առավել արագ ստացման համար, ունի մի շարք թերություններ: Մասնավորապես՝ 2024 թ զորակչերի ընթացքում հավելվածն աշխատում էր տեխնիկական թերություններով, զորակոչի վերջին օրերին մի քանի օր շարունակ զորակոչիկները հասանելիություն չեն ունեցել իրենց առողջական վիճակի հետազոտության արդյունքներին, հետազոտությունների ավարտից ավելի քան մեկ շաբաթ, երբեմն նաև տասն օր անց զորակոչիկների վերաբերյալ փաստաթղթերը ներբեռնված ու հասանելի չեն հավելվածում: Բացի այդ, նախկինում պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից տարկետում ստացած զորակոչիկների նախորդ տարիների առողջական վիճակի հետազոտությունների վերաբերյալ ակտերը ևս հասանելի չեն ԱՐՄԵԴ հավելվածում, հետևաբար զորակոչիկները ստիպված են լինում անձամբ գնալ զինկոմիսարիատներ՝ դրանք ստանալու համար և կրկին բախվում են փաստաթղթերի չտրամադրման կամ ուշ տրամադրման խնդրին:

16. Շարունակում է մտահոգիչ մնալ զինկոմիսարիատների որոշ աշխատակիցների վերաբերմունքը զորակոչիկների նկատմամբ՝ զինվորական ծառայության զորակոչվելու մասին ծանուցագրից հրաժարվելու դեպքում իրավական հետևանքների վերաբերյալ հայտնելիս: Մասնավորապես, որոշ զինկոմիսարիատներ (օրինակ՝ Լոռու մարզի) զորակոչիկներին «սպառնում են» «ռոզիսկ»-ի (քրեական հետախուզման) վտանգով՝ ծանուցագրից հրաժարվելու դեպքում: Այսինքն, զորակոչիկներին ոչ միայն պատշաճ չեն իրազեկում իրենց իրավունքների և պարտականությունների մասին, այլև դրսևորվում է արժանապատվությունը նվաստացնող վերաբերմունք, որը ոչ միայն հանդիսանում է մարդու իրավունքի խախտում, այլև որպես հետևանք, զորակոչիկի մոտ խիստ բացասական կարծիք և վերաբերմունք է ձևավորում զինվորական ծառայության և զորակոչի կազմակերպման համար պատասխանատու կառույցի, ինչպես նաև ՀՀ պաշտպանության նախարարության հանդեպ:

ՊԱՀԵՍՏԱԶՈՐԱՅԻՆՆԵՐԻ ՎԱՐԺԱԿԱՆ ՀԱՎԱՔՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրենսդրական խնդիրներ

1. ՀՀ կառավարության 2018 թ N 1174-Ն որոշմամբ (նաև՝ Որոշում) սահմանվում է «...4) ռազմաուսուցված պահեստազորայիններին **ըստ անհրաժեշտության մարտական հերթապահության ներգրավումը**»: Օրենքով չի հստակեցվում, թե որ դեպքերն են համարվում **անհրաժեշտություն**, հետևաբար «ըստ անհրաժեշտության» մարտական հերթապահության ներգրավումը հիմնավոր չէ վարժական հավաքներին ներգրավված անձի համար:

2. Որոշման 11-րդ կետի համաձայն՝ «Վարժական հավաքների անցկացման գործընթացում զինվորական կոմիսարիատները՝ 1) համագործակցելով համապատասխան զորամասերի հրամանատարների հետ, իրականացնում են վարժական հավաքներին ներգրավվող **պահեստազորայինների ընտրություն**»: Որոշմամբ **որևէ դրույթ չի սահմանում վարժական հավաքներին ենթակա պահեստազորայինի ընտրության կարգը**, իսկ հաջորդ դրույթն արդեն իսկ վերաբերում է ընտրված պահեստազորայինի ծանուցման կարգին: Զինվորական կոմիսարը, կատարելով վարժական հավաքներին մասնակցող պահեստազորայինի ընտրություն, իրականացնում է վարչարարություն, որը անձի համար առաջացնում է իրավունքներ և պարտականություններ (վարչական ակտ), մինչդեռ ծանուցումը միայն փաստի հաղորդում է, սակայն իրավական ակտ չէ, եթե դրա հիմքում չկա պաշտոնական որոշում: «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքը սահմանում է վարչական ակտի հասկացությունը, իսկ վարչական ակտը ընդունվում է հանրային իրավունքի բնագավառում կոնկրետ գործի կարգավորման նպատակով, որը սույն դեպքում պահեստազորայինի վարժական հավաքներին ներգրավումն է: Մինչդեռ օրենքով ամրագրված չէ վարժական հավաքներին ներգրավվող պահեստազորայինի ընտրության կարգը՝ «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանած կարգի համաձայն՝ ապահովելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված որոշակիության սկզբունքը:

3. Ի տարբերություն պարտադիր ժամկետային զինվորական և այլընտրանքային ծառայության, վարժական հավաքից խուսափած անձանց դեպքում օրենքով

ամրագրված չէ անձանց՝ քրեական պատասխանատվությունից ազատվելու դրույթը կամովին ներկայանալու և վարժական հավաքների ենթարկվելու դեպքում, ինչը կհեշտացներ վարժական հավաքների իրականացման գործընթացը, կթեթևացներ վարույթն իրականացնող մարմնի ծանրաբեռնվածությունը:

Գործնականում առկա խնդիրներ

1. Պահեստազորում հաշվառված անձանց վարժական հավաքների ներգրավելիս ՀՀ ՊՆ զինկոմիսարիատներն առաջնորդվում են ոչ թե վերջիններիս զինվորական մասնագիտությամբ ու զինվորական վարժանքներ անցնելու անհրաժեշտությամբ, այլ ըստ հայեցողության՝ որոշ փաստաթղթերի ստացման նպատակով այդ անձանց՝ տարածքային ստորաբաժանումում «հայտնվելու» հանգամանքով պայմանավորված:

2. Որոշ դեպքերում պահեստազորայինների վարժական հավաքներին անձանց ներգրավելու վերաբերյալ ծանուցումները վերջիններիս տրամադրվում են հավաքների մեկնարկից ընդամենը մի քանի օր առաջ: Բացի այդ, անձանց չի ընձեռվում հնարավորություն ընտրելու վարժական հավաքներին մասնակցելու ժամանակահատվածը, ինչի հետևանքով նրանք մի շարք խնդիրներ են ունենում թե աշխատանքային, թե ընտանեկան, թե տնտեսական և այլ գործունեության հետ կապված:

3. Օրենսդրորեն ամրագրված չեն վարժական հավաքներին ներգրավվող քաղաքացիների ընտրության առաջնահերթություններն ըստ վերջիններիս մասնագիտությունների, սահմանված չեն վարժական հավաքներին ներգրավվող քաղաքացիների ընտրության այնպիսի չափանիշներ, որոնք հաշվի կառնեն նույն մասնագիտության դեպքում քաղաքացիներին վարժական հավաքներին ներգրավելու առաջնահերթությունները, օրինակ՝ ընտանեկան դրությունը, աշխատանքային պայմանները: Նման չափանիշների բացակայությունը կարող է առաջացնել կոռուպցիոն ռիսկեր՝ պայմանավորված անձանց վարժական հավաքին ներգրավելու հայեցողական մոտեցմամբ կամ այլ հանգամանքներով:

4. ՀՀ կառավարության 2018 թ N 1174-Ն որոշմամբ սահմանվում է, որ «Վարժական հավաքները պահեստազորի առաջին խմբի առաջին և երկրորդ կարգերում հաշվառված շարքային, ենթասպայական և սպայական կազմերի պահեստազորայինների ներգրավվումն է **կարճաժամկետ զինվորական**

ծառայության՝ նրանց ռազմական ունակությունները կատարելագործելու և վերապատրաստելու նպատակով:» Այսինքն՝ վարժական հավաքները ենթարդրում են պահեստազորայինների վերապատրաստումներ, մինչդեռ վարժական հավաքների ընթացքում **մարտական հերթապահության իրականացումը չի կարող համարվել վերապատրաաստում** մի շարք պատճառներով: Մասնավորապես՝ վարժական հավաքներին ներգրավվողները որպես կանոն այն անձինք են, ովքեր զինվորական ծառայություն, այդ թվում նաև մարտական հերթապահություն են իրականացրել տարիներ առաջ՝ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում: Ոմանք նույնիսկ պարտադիր ժամկետային զինվորական ծառայության ընթացքում ընդհանրապես չեն ներգրավվել մարտական հերթապահության մեջ, հետևաբար գործնականում վարժական հավաքների ընթացքում 7 օր պատրաստություն անցնելուց հետո 14 օր մարտական հերթապահության իրականացումը նշանակում է առանց պատշաճ պատրաստության մարտական հերթապահության իրականացում և հետևաբար չափազանց մեծ ռիսկեր է պարունակում թե՛ մարտական կամ պատերազմական գործողությունների մեկնարկի դեպքում և թե՛ մարտական ծառայություն կրելու կանոնների խախտման հավանականության տեսանկյունից:

5. «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքով սահմանված կարգով պահեստազորում հաշվառված քաղաքացիների «պատշաճ ծանուցում է համարվում ծանուցագիրը փաստաթղթային կամ փոստային կապի միջոցով կամ անհատական կամ հրապարակային եղանակով տրամադրելը»: Մինչդեռ գործնականում քաղաքացիներին պահեստազորայինների վարժական հավաքներին ներգրավելու վերաբերյալ ծանուցումները որոշ դեպքերում ուղարկվում են աշխատանքի վայր և դրանք ստանում է գործատուն, այլ ոչ թե վարժական հանաքի ենթակա քաղաքացին, ինչը օրենքով սահմանված պատշաճ ծանուցում չի համարվում:

6. Չի ապահովվում վարժական հավաքներին ներգրավելու համար պահեստազորում հաշվառված անձանց առողջական վիճակի պատշաճ և ամբողջական բժշկական հետազոտությունների իրականացումը եւ փորձաքննությունը, արդյունքում վարժական հավաքին ներգրավելու մասին որոշումը կայացվում է առանց անձի իրական առողջական վիճակը պարզելու, ինչի

պարագայում մեծանում է պահեստազորայինի առողջական վիճակի վատթարացման ռիսկը:

7. Զորակոչային բժշկական հանձնաժողովները պահեստազորում հաշվառված անձանց ենթարկում են թերի բժշկական հետազոտությունների, իսկ քաղաքացիների ներկայացրած գանգատներին ի պատասխան հորդորում են ներկայացնել սեփական միջոցներով իրականացված բժշկական զննությունների արդյունքները: Սույն մոտեցումը խնդրահարույց է այն իմաստով, որ սեփական միջոցներով բժշկական հետազոտություններ անցնելու հնարավորություն չունեցող անձինք կարող են ներգրավվել վարժական հավաքներին առանց առողջական վիճակի հետազոտության:

8. Օրենքով ամրագրված չէ մինչ վարժական հավաքներին անձանց ներգրավելը, վիրահատական ցուցման դեպքում պետպատվերի շրջանակներում պահեստազորում հաշվառված անձանց վիրահատության ենթարկելու և այլ տեսակի բուժում իրականացնելու դրույթը, միևնույն ժամանակ՝ հաշվի չի առնվում այն հանգամանքը, որ պահեստազորում հաշվառված որոշ քաղաքացիներ չունեն բավարար ֆինանսական միջոցներ բուժման համար և կայացվում է որոշում առողջական լուրջ խնդիրներով անձանց վարժական հավաքների ենթարկելու մասին: Նշված պարագայում ևս անձինք վարժական հավաքներից վերադառնում են վատթարացած առողջական խնդրով:

9. Բարձր աշխատավարձ ստացող և վարկային կամ հիփոթեքային պարտավորություններ ունեցող քաղաքացիներին, հատկապես՝ անհատ ձեռներեցներին վարժական հավաքների ներգրավելու դեպքում վերջիններս ունենում են ֆինանսական խնդիրներ ֆինանսական պարտավորությունները կատարելու տեսանկյունից: Օրենքով սահմանված վճարումները որոշ քաղաքացիների դեպքում մեծապես տարբերվում են նրանց ամսական աշխատավարձի չափից այն պատճառով, որ վերջինիս եկամուտը գոյանում է աշխատավայրում գտնվելու արդյունքում՝ յուրաքանչյուր օրվա եկամտի հանրագումարից, ինչը հանգեցնում է քաղաքացու կողմից իր կամքից անկախ վարկային կամ այլ ֆինանսական պարտավորությունների չկատարմանը:

10. Գործնականում չի կիրառվում «Պահեստազորային պատրաստության շրջանակներում իրականացվող միջոցառումների կազմակերպման կարգը

սահմանելու մասին» ՀՀ կառավարության 2018 թ. հոկտեմբերի 18-ի N 1174-Ն որոշման այն դրույթը, համաձայն որի՝ «Վարժական հավաքների կանչվում են պահեստազորի առաջին խմբում հաշվառված այն պահեստազորայինները, որոնք ունեն համապատասխան զինվորական կամ քաղաքացիական մասնագիտություն կամ դրանց հարակից մասնագիտություններ և պիտանի են զինվորական ծառայության համար:» Պահեստազորում հաշվառված անձանց վարժական հավաքներին ներգրավելիս հաշվի չի առնվում վերջիններիս քաղաքացիական մասնագիտությունը և փորձառությունը, որոնք կարող են առավել արդյունավետ օգտագործել պետության պաշտպանության և անվտանգության ապահովման գործում, քանի որ տարիներ առաջ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց հետո նրանք հմտացել են ոչ թե զինվորական, այլ հարակից քաղաքացիական մասնագիտության մեջ:

ԱՌԱՋԱՐԿՈՒԹՅՈՒՆՆԵՐ ՊԱՐՏԱԴԻՐ ԺԱՄԿԵՏԱՅԻՆ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԶՈՐԱԿՈՉԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

Օրենսդրական առաջարկություններ

ՀՀ պաշտպանության նախարարությանը

ՀՀ կառավարությանը

1. ՀՀ կառավարության 2018 թ N 404-Ն որոշման մեջ 2024 թ. ընթացքում կատարված պարտադիր ժամկետային զինվորական ծառայության համար քաղաքացու պիտանիության աստիճանը որոշող հիվանդությունների ցանկում կատարել փոփոխություններ զորակոչիկների և զինծառայողների մարդու իրավունքների պաշտպանության բնագավառում պետության ստանձնած պարտավորություններին՝ այդ թվում նաև անձի առողջության պահպանման իրավունքի համապատասխան:

Հաշվի առնելով մտավոր խնդիրներ ունեցող զինծառայողների՝ զինվորական պարտականությունների արդյունավետ իրականացման խոչընդոտները և կարևորելով զինծառայողների առողջության վատթարացման կանխարգելումը՝ ընդունել զորակոչիկների և զինծառայողների համար բարենպաստ իրավական ակտ՝ զինվորական ծառայությունից ազատելով «Մտավոր հետամնացություն» ախտորոշում ունեցող զորակոչիկներին:

2. Անձի մոտ մի քանի հիվանդության առկայության դեպքում դիտարկել ոչ թե հիվանդությունների քանակը, այլ գնահատել նշված հիվանդությունների ազդեցությունը անձի վրա՝ վերջինիս զինվորական ծառայությանը բնորոշ ֆիզիկական ծանրաբեռնվածության պայմանների և ծառայողական պարտականությունները արդյունավետ կատարելու տեսանկյունից:

3. Միաժամանակ մի քանի հիվանդության դեպքում սահմանել անձի զինվորական ծառայությանը պիտանիությունը որոշելու իրավական հիմքերը. անձի մոտ առկա հիվանդությունները դիտարկել միասին:

4. Պետության կողմից տրամադրվող անվճար բուժօգնության շրջանակներում օրենքով ամրագրել նաև այնպիսի հետազոտությունների տրամադրումը, ինչպիսիք են մագնիսառեզոնանսային շերտագրումը, համակարգչային շերտագրումը և այլ

լաբորատոր կամ գործիքային հետազոտություններ, որոնք կապահովեն զորակոչիկների առողջական խնդիրների բացահայտման արդյունավետությունը:

5. Օրենքով ամրագրել պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից զորացրվելուց առաջ զինծառայողների առողջական վիճակի պատշաճ և համալիր հետազոտության իրականացման դրույթը, ինչպիսին գործում է զորակոչի դեպքում:

ՀՀ պաշտպանության նախարարությանը
ՀՀ արդարադատության նախարարությանը

6. Պարտադիր ժամկետային զինվորական ծառայության հերթական զորակոչի ընթացքում զինվորական ծառայությանը զորակոչիկին պիտանի ճանաչելու վերաբերյալ ընդունված վարչական ակտերի՝ ԿԲՀ եզրակացությունների, գործողության կամ անգործության դեմ ՀՀ վարչական դատարան ներկայացված հայցադիմումների հիման վրա հարուցված գործերով օրենքով ամրագրել վարչական գործերի քննության և դրա շրջանակներում նշանակված դատաբժշկական փորձաքննությունների կատարման այնպիսի ժամկետներ, որը հնարավորություն կընձեռի դատարանի որոշումն ունենալ մինչև զորակոչի ավարտը, ինչպես օրինակ՝ սահմանված է ընտրական իրավունքի պաշտպանության վերաբերյալ գործերով:

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

Զինկոմիսարիատների բժշկական հանձնաժողովներին/
Ամբուլատոր-պոլիկլինիկական հաստատության զորակոչային բժշկական հանձնաժողովներին/
Կենտրոնական բժշկական հանձնաժողովին

7. Զորակոչիկներին բոլոր առողջական խնդիրներով ուղեգրել հետազոտությունների և իրականացնել զորակոչիկների առողջական վիճակի ամբողջական հետազոտություն:

8. Բացառել զորակոչիկների կողմից ներկայացված գանգատները չարձանագրելու պրակտիկան: Անկախ այդ գանգատների հետագա հետազոտման արդյունքներից՝ դրանք պատշաճ արձանագրել անձի առողջական վիճակի հետազոտման ակտերում:

9. Մի քանի առողջական խնդիրներ ունեցող զորակոչիկների բժշկական հետազոտությունն իրականացնել բոլոր խնդիրներով և առողջական վիճակի վերաբերյալ եզրակացությունը ներկայացնել առողջական բոլոր խնդիրների վերաբերյալ՝ անկախ մեկ խնդրով պիտանիության վերաբերյալ որոշումից:

10. Ստուգիչ բժշկական հետազոտությունների օբյեկտիվությունն ապահովելու համար զորակոչիկի կողմից իր առողջական վիճակի հետազոտության արդյունքները բողոքարկելու դեպքում վերջինիս ստուգիչ հետազոտության ուղեգրել ոչ թե նույն, այլ մեկ ուրիշ բժշկի մոտ, քանի որ ակնհայտ է, որ նույն բժիշկը կաշկանդված կլինի նախկինում իր կողմից տրված ախտորոշումից տարբերվող ախտորոշում արձանագրել, նույնիսկ եթե արձանագրված արյունքներն էականորեն տարբերվեն միմյանցից:

11. Բժշկական հետազոտությունների ընթացքում ապահովել անձի գաղտնիության իրավունքը և զորակոչիկների արտաքին մարմնական զննություն իրականացնել առանձին, ոչ թե այլ զորակոչիկների ներկայությամբ:

12. Հաշվի առնելով սեզոնային հիվանդությունների բնույթն ու առանձնահատկությունները, զորակոչիկներին իրենց առողջական խնդիրների կապակցությամբ հետազոտությունների ենթարկել առողջական խնդրի սրման եղանակային ժամանակահատվածում և պիտանիության մասին եզրակացությունը կայացնել միայն դրա հիման վրա:

13. Բուժման նպատակով պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից տարկետում ստացած զորակոչիկներին տարկետման ժամանակահատվածում ապահովել անվճար և որակյալ բժշկական օգնությամբ և սպասարկմամբ: Միևնույն ժամանակ տարկետման ժամանակահատվածում բուժում ստանալու նպատակով համապատասխան բժշկական հաստատություն չդիմելու կամ բուժման չներկայանալու դեպքում սահմանել զորակոչիկների պատասխանատվություն, բացառությամբ այն դեպքերի, երբ առողջական խնդրի բուժման տարբերակները համապատասխան նեղ մասնագետների կողմից գնահատվում են ռիսկային զորակոչիկների առողջական վիճակի վատթարացման տեսանկյունից: Սույն դեպքերում բացառել կենտրոնական բժշկական հանձնաժողովի կողմից նշված խնդրով զորակոչիկներին զինվորական ծառայության համար պիտանի ճանաչելու վերաբերյալ եզրակացության տրամադրումը:

14. Հաշվի առնելով զորակոչային բժշկական հանձնաժողովների կողմից հակասական մոտեցումը զորակոչիկների՝ սեփական ֆինանսական միջոցներով հետազոտությունների իրականացման հարցում, սահմանել պարտադիր ընթացակարգ, ըստ որի՝ բժշկական հանձնաժողովները հիմնավորված գրավոր ձևով կարձագանքեն զորակոչիկի ներկայացրած հետազոտությունների արդյունքներին, հստակ նշելով՝ ինչու են դրանք ընդունվում կամ մերժվում:

15. Ապահովել զինկոմիսարիատների աշխատակիցների պարտադիր վերապատրաստումը՝ զորակոչիկների հետ շփման ժամանակ մարդու իրավունքների, մասնավորապես՝ մարդկային արժանապատվության, տեղեկատվության մատչելիության և հստակ իրավական իրազեկման սկզբունքների պահպանման թեմաներով: Հատուկ ուշադրություն դարձնել իրավաչափ հաղորդակցության մշակմանը՝ բացառելու սպառնալիքի կամ ճնշման տարրեր պարունակող ձևակերպումները զինկոմիսարիատների աշխատակիցների կողմից:

ՀՀ առողջապահության նախարարությանը

16. Ապահովել նախազորակոչային և զորակոչային տարիքի անձանց բոլոր գանգատների արձանագրումը պոլիկլինիկաներում, քանի որ դրանք հետագայում հիմք են հանդիսանում զորակոչի շրջանակներում հետազոտությունների իրականացման համար ուղեգրումների համար:

17. Զորակոչիկների բժշկական փորձաքննությունն իրականացնելու համար զորկոչիկներին կանչել հստակ նշված ժամերի՝ ըստ հերթականության, խուսափելու համար հերթերից և որոշ դեպքերում մարզերից Երևան մեկնած զորակոչիկներին առանց հետազոտության հետ ուղարկելու և հաջորդ օրը կանչելու արատավոր պրակտիկայից:

18. Բացառել որոշ բժշկական հաստատությունների՝ առանց ուղեգրի ներկայացած 18 տարին լրացած արական սեռի քաղաքացիներին՝ չհետազոտելու պրակտիկան՝ վերջիններիս տարիքի և զորակոչիկ հանդիսանալու հանգամանքով պայմանավորված:

19. Անհրաժեշտության դեպքում, երբ հրատապ բուժում պահանջող առողջական խնդիրներով զորակոչիկները դիմում են բուժհաստատություն սեփական

ֆինանսական միջոցներով հետազոտությունների և բուժման իրականացման համար, վերջիններիս ընդունել առանց զինկոմիսարիատների կողմից տրված ուղեգրի ներկայացման պահանջի:

20. Ապահովել, որ բժիշկների կողմից արձանագրվեն սեփական նախաձեռնությամբ և ֆինանսական միջոցներով բժշկական հետազոտության ներկայացած զորակոչային տարիքի անձանց իրական առողջական խնդիրները՝ առանց «խնդիրներ ունենալու» և «աշխատանքից ազատվելու» մտավախության:

21. Ապահովել ԱՐՄԵԴ հավելվածի ֆունկցիոնալ և տեխնիկական կայունությունը: Երաշխավորել անձի բոլոր, այդ թվում նաև նախկին մի քանի տարիների զորակոչերի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքների և ԿԲՀ եզրակացությունների հասանելիությունը զորակոչիկների համար:

Պահեստազորայինների վարժական հավաքների վերաբերյալ

Օրենսդրական առաջարկություններ

ՀՀ պաշտպանության նախարարությանը

1. Օրենսդրորեն սահմանել խելամիտ ժամկետ քաղաքացիներին պահեստազորայինների վարժական հավաքներին ներգրավելու մասին ծանուցումը ստանալուց հետո վարժական հավաքների ներգրավվելու համար՝ հաշվի առնելով անձանց կենսագործունեության վերակազմակերպման համար անհրաժեշտ ժամանակահատվածը:

2. Օրենսդրորեն ամրագրել պահեստազորում հաշվառված քաղաքացիների՝ վարժական հավաքներին մասնակցելու ժամանակահատվածն ընտրելու իրավունքը:

3. Օրենսդրորեն երաշխավորել վարժական հավաքներին ներգրավվող քաղաքացիների ընտրության առաջնահերթություններն ըստ մասնագիտությունների՝ հաշվի առնելով անձանց ընտանեկան դրությունը, աշխատանքի բնույթը եւ այլ հանգամանքներ: Սահմանել վարժական հավաքներին ներգրավվող քաղաքացիների ընտրության այնպիսի չափանիշներ, որոնք հաշվի կառնեն նույն մասնագիտության դեպքում քաղաքացիներին վարժական հավաքներին ներգրավելու

առաջնահերթությունները, օրինակ՝ ընտանեկան դրությունը, աշխատանքային պայմանները և այլն:

4. Օրենսդրորեն հստակեցնել, թե որ դեպքերն են համարվում անհրաժեշտություն **մարտական հերթապահության ներգրավման համար**: Մարտական հերթապահության իրականացման պահանջի օրենսդրական ամրագրումը շատ կարևոր է, քանի որ ըստ անհրաժեշտության մարտական հերթապահության ներգրավումը պետք է լինի հիմնավոր ու հասանելի հավաքներին ներգրավված անձի համար:

5. Միևնույն ժամանակ անձը պետք է ունենա ընտրության հնարավորություն մարտական հերթապահության ներգրավվելու համար: Օրենսդրական կարգավորմամբ բացառել վարժական հավաքների իրականացման ընթացքում պահեստազորայիններին /բացառությամբ ակտիվ պահեստազորի/ մարտական հերթապահության իրականացման մեջ ներգրավման պարտադիր դրույթը: Պահեստազորայիններին ընձեռել կամարտահայտման հնարավորություն՝ մարտական հերթապահության ներգրավվելու վերաբերյալ՝ միաժամանակ երաշխավորելով վերջիններիս բարձր դրամական ապահովումը:

6. Օրենքով ամրագրել վարժական հավաքներին ներգրավվող պահեստազորայինների ընտրության կարգը՝ համաձայն «Վարչարարության հիմունքների և վարչական վարույթի մասին» ՀՀ օրենքով սահմանած կարգով՝ ապահովելով ՀՀ Սահմանադրությամբ ամրագրված որոշակիության սկզբունքը:

7. Օրենքով ամրագրել վարժական հավաքից խուսափած անձանց քրեական պատասխանատվությունից ազատվելու դրույթը կամովին ներկայանալու և վարժական հավաքների ենթարկվելու դեպքում, որպիսին սահմանված է պարտադիր ժամկետային զինվորական և այլընտրանքային ծառայության դեպքում (ՀՀ քր. օր. Հոդված 461 կետ 4):

Գործնականում առկա խնդիրների վերաբերյալ առաջարկություններ

ՀՀ պաշտպանության նախարարությանը

8. Դադարեցնել քաղաքացիներին պահեստազորայինների վարժական հավաքներին ներգրավելու վերաբերյալ ծանուցումները աշխատանքի վայր՝

վերջիններիս գործատուներին ուղարկելու և հանձնելու պրակտիկան և վերջիններիս ծանուցումը կատարել օրենքով սահմանված կարգով՝ անձամբ իրենց:

9. Մինչև վարժական հավաքին անձի ենթակա լինելու վերաբերյալ որոշում կայացնելը, ապահովել վարժական հավաքներին ներգրավելու համար պահեստազորում հաշվառված անձանց պատշաճ բժշկական հետազոտությունների եւ փորձաքննության իրականացումը:

10. Առողջական խնդրի վիրահատական բուժման ցուցման առկայության դեպքում պետպատվերի շրջանակներում իրականացնել պահեստազորում հաշվառված անձանց վիրահատական և այլ տեսակի բուժումը նախքան վարժական հավաքներին նրանց ներգրավումը: Միաժամանակ բացառել վիրահատությունից հրաժարվելու դեպքում անձանց վարժական հավաքների ներգրավելու պրակտիկան այն դեպքերում, երբ համապատասխան հավաստող փաստաթղթերով նշվում է, որ վիրահատության դրական ելք երաշխավորված չէ:

11. Պահեստազորայինների ֆինանսական վնասներ կրելուն չդրդելու տեսանկյունից երաշխավորել պահեստազորայինների եկամուտների չափին համապատասխան ֆինանսական փոխհատուցման ապահովումը՝ հաշվի առնելով վարժական հավաքներին մասնակցելիս մասնավոր ոլորտում աշխատող կամ անհատ ձեռներեց հանդիսացող անձանց տրամադրվող ֆինանսական միջոցների անհամապատասխանությունն իրենց փաստացի եկամուտներին:

12. Պահեստազորում հաշվառված անձանց վարժական հավաքներին ներգրավելիս հաշվի առնել զինվորական մասնագիտություններին հարակից քաղաքացիական մասնագիտությունն ու փորձառությունը, որոնք կարող են առավել արդյունավետ օգտագործվել պետության պաշտպանության և անվտանգության ապահովման գործում:

Հավելված 1

2024 ԹՎԱԿԱՆԻ ԱՄԱՌԱՅԻՆ ԵՎ ՁՄԵՌԱՅԻՆ ԶՈՐԱԿՈՉԵՐԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՔԱ ՎԱՆԱՁՈՐԻ ԳՐԱՍԵՆՅԱԿԻ ԿՈՂՄԻՑ ԱՐՁԱՆԱԳՐՎԱԾ ԽՆԴԻՐՆԵՐԻ ՆԿԱՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆ ԸՍՏ ԱՌԱՆՁԻՆ ԴԵՊՔԵՐԻ

Զորակոչիկ

1. Ն. Հ.

Զորակոչիկն ունենալով մի շարք առողջական խնդիրներ նախկինում երկու անգամ ստացել տարկետում մինչև մեկ տարի ժամկետով: Տարբեր տարիներին առողջական խնդրի կապակցությամբ զորակոչային բժշկական հանձնաժողովների կողմից Ն. Հ.-ին տրվել են միմյանցից տարբերվող, սակայն պիտանիության որոշման հարցում կարևոր նշանակություն ունեցող ախտորոշումներ:

ՀՀ պաշտպանության նախարարությանը Կազմակերպության դիմումի հիման վրա զորակոչիկը ենթարկվել է ստուգիչ հետազոտության և ճանաչվել է ժամանակավորապես ոչ պիտանի զինվորական ծառայության համար:

Այսինքն, զինվորական ծառայությանը զորակոչիկի պիտանիության վերաբերյալ որոշումը կայացվել է վերջինիս առողջական վիճակի ոչ համալիր հետազոտությունների արդյունքում:

2. Է. Հ.

Զորակոչիկն առողջական ոչ բոլոր խնդիրներով է ուղեգրվել հետազոտությունների, քանի որ պոլիկլինիկայում չի արձանագրվել առողջական խնդիրներից մեկը: Արդյունքում, հաշվի առնելով, որ հետազոտությունները թերի են, զորակոչը հետաձգվել է 5 ամսով:

Փաստորեն, զորակոչային բժշկական հանձնաժողովը, որը հետազոտությունների ուղեգրելիս հիմնվում է պոլիկլինիկայի ամբուլատոր քարտում զորակոչիկի առողջական վիճակի վերաբերյալ տվյալների վրա, զորակոչիկին չի ուղեգրում հետազոտությունների իր բոլոր առողջական խնդիրների կապակցությամբ զորակոչիկի ամբուլատոր քարտում առկա թերությունների պատճառով: Այսինքն, անհրաժեշտ է պարտավորեցնել պոլիկլինիկաներին զորակոչիկներին համալիր

հետազոտելու և գործնականում արձանագրելու վերջիններիս բոլոր առողջական խնդիրները:

3. Ա. Բ.

Զորակոչիկի մոտ առկա է ողնաշարի խնդիր, կրծքի ծռվածություն, որի պատճառով չի կարողանում վազել կամ ֆիզիկական վարժություններ կատարել, ախտորոշվել է նաև ռենոյի համախտանիշ: Չնայած բոլոր առողջական խնդիրների առկայությանը զորակոչիկն առանց կենտրոնական բժշկական հանձնաժողովի նիստին ներկայացվելու ծանուցվել է պարտադիր ժամկետային զինվորական ծառայության զորակոչվելու մասին:

Զորակոչիկը սեփական ֆինանսական միջոցներով հետազոտության է ենթարկվել, որի արդյունքում տրված ախտորոշման հիման վրա վերջինիս տրամադրվել է տարկետում մինչև 1 տարի ժամկետով:

Ի դեպ, սեփական միջոցներով հետազոտվելիս բժշկական կենտրոնում («Վանաձոր»), հրաժարվել են հետազոտել՝ զորակոչային անձ լինելու հանգամանքով պայմանավորված: Միայն ՀՀ առողջապահության նախարարին ուղղված դիմումի արդյունքում զորակոչիկը կարողացել է ենթարկվել հետազոտությունների՝ սեփական միջոցներով:

4. Բ. Հ.

2021 թ. զորակոչիը ողնաշարի խնդրով ժամանակավորապես ոչ պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար: 2024 թվականի թերի հետազոտությունների արդյունքում զորակոչիկը սահմանափակումով պիտանի է ճանաչվել զինվորական ծառայության համար:

Զորակոչիկը սեփական միջոցներով ցանկացել է հետազոտվել մի շարք բժշկական հաստատություններում, որտեղ վերջինիս տեղեկացրել են, որ ունեն «հստակ հրաման» առողջապահության նախարարությունից և առանց համապատասխան ուղեգրման չեն կարող հետազոտել զորակոչային տարիքի անձանց:

ՀՔԱ Վանաձորի գրասենյակը յուրաքանչյուր բուժհաստատության մերժումն ու դրսևորած վարքագիծը ներկայացնելով ՀՀ առողջապահության նախարարին, խնդրել վկայակոչել, թե որ որոշման կամ հրամանին են հղում կատարում բժշկական

հաստատությունները: մասին պարբերաբար ահազանգում են զորակոչիկները: Թեպետ Նախարարը հերքել է նման հրամանի առկայությունը, այնուամենայնիվ Կազմակերպության ստացած ահազանգերը վկայում են, որ խնդիրը կրում է համակարգային բնույթ և խոչընդոտում զորակոչիկների՝ բժշկական սպասարկումից անարգել օգտվելու իրավունքը:

Կազմակերպության գրությունների հիման վրա զորակոչիկն ուղեգրվել է նոր հետազոտությունների և ներկայացվելու է փորձաքննության հաջորդ զորակոչի շրջանակներում:

5. Ա. Հ.

Զորակոչիկին ծնկահոդի վնասվածքի կապակցությամբ խորհուրդ է տրվել վիրահատական բուժում, սակայն վերջինիս պետության կողմից երաշխավորված անվճար բժշկական օգնության և սպասարկման շրջանակներում չի առաջարկվել վիրահատություն, իսկ զորակոչիկը ֆինանսական միջոցների սղության պատճառով սեփական միջոցներով հնարավորություն չի ունեցել ենթարկվել ցուցված վիրահատությանը: 2024 թ զորակոչին նախարդող ժամանակահատվածում զորակոչիկի ոտքը նույն հատվածում վնասվել է, սակայն նա ճանաչվել է սահմանափակումով պիտանի զինվորական ծառայության համար:

Փաստացի, բուժման նպատակով տրամադրված տարկետման ընթացքում զորակոչիկները չեն ստանում բուժում, չեն ենթարկվում անհրաժեշտ վիրահատության:

6. Ա. Խ

Առանց հաշվի առնելու զորակոչիկի տեսողության խնդրի հարաճուն բնույթը և այն հանգամանքը, որ առանց որևէ բժշկական միջամտության զորակոչիկի տեսողությունը չէր կարող բարելավվել նախորդ զորակոչի համեմատ, երբ տրամադրվել էր տարկետում, հաջորդ հերթական զորակոչին վերջինս ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար:

Փաստորեն, մինչ զինվորական ծառայությանը զորակոչիկների պիտանիությունը որոշելը չեն ապահովվում ՀՀ կառավարության 2018 թ N 404-Ն որոշմամբ սահմանված դրույթները՝ հստակեցնելու զորակոչիկների ներկա առողջական վիճակը:

7. Հ. Գ

2024 թվականի ամառային զորակոչի շրջանակներում առկա 7 առողջական խնդիրներից միայն մեկ խնդրով են փորձաքննել:

Հիմնվելով թերի հետազոտությունների արդյունքների վրա՝ 2024 թվականի ամառային զորակոչին ԿԲՀ կողմից զորակոչիկի վերաբերյալ կայացվել է որոշում զինվորական ծառայությանը սահմանափակումով պիտանիության վերաբերյալ:

Բացի այդ զորակոչիկի մոտ առկա բազմաթիվ առողջական խնդիրները դիտարկվում են իրարից մեկուսի՝ անտեսելով դրանց բացասական ազդեցությունը զորակոչիկի ընդհանուր առողջական վիճակի վրա:

Տարիներ շարունակ ՀՔԱ Վանաձորի գրասենյակն արձանագրել և բազմիցս բարձրաձայնել է այն խնդրի մասին, որ օրենսդրությամբ չի սահմանվում միաժամանակ մի քանի հիվանդության դեպքում անձի զինվորական ծառայությանը պիտոնիությունը որոշելու, զորակոչելու գնահատման մոտեցումը և իրավական հիմքերը՝ անձի մոտ առկա հիվանդությունները դիտարկելով առանձին՝ մեկը մյուսից մեկուսի և ոչ թե դիտարկելով անձի առողջական վիճակի ողջ պատկերը:

8. Ն. Ա

Զինվորական կոմիսարիատի զինկոմիսարիատում զորակոչիկին հորդորել են առողջական վիճակի հետազոտության արդյունքների ծանոթանալ Արմեդ հավելվածի միջոցով, մինչդեռ թե՛ նախորդ տարվա, թե՛ ընթացիկ զորակոչի շրջանակներում իրականացված հետազոտությունների արդյունքները հասանելի չեն եղել Արմեդ հավելվածում:

Արդյունքում, զորակոչիկը ստիպված կրկին անձամբ դիմել է զինկոմիսարիատ՝ իր առողջական վիճակի հետազոտությունների արդյունքների պատճենները թղթային տարբերակով ստանալու համար:

Վերստին արձանագրում ենք Արմեդ հավելվածի թերի գործարկման համար:

9. Ս. Թ

Զորակոչիկին ախտորոշումը տրվել է կասկածով (հարցական նշանով ախտորոշումից հետո) և առողջական խնդրի ախտորոշման հաստատման նպատակով զորակոչիկը պետք է ուղեգրվեր ստուգիչ հետազոտության, որը ևս

որոշիչ նշանակություն ունի զինվորական ծառայությանը զորակոչիկի պիտանիության որոշման համար:

10.Ս. Թ

2024 թ. ամառային զորակոչի ընթացքում վերստին արձանագրվել է առանց զինկոմիսարիատի տարածքային ստորաբաժանման կողմից տրված ուղեգրի զորակոչային տարիքի անձանց հետազոտության չիրականացման պրակտիկան բժշկական հաստատության կողմից: Մասնավորապես, թոքաբորբով զորակոչիկը դիմել է «Միքայելյան» և «Արաբկիր» բժշկական կենտրոններ՝ սեփական ֆինանսական միջոցներով հետազոտության ենթարկվելու և բուժում ստանալու նպատակով, մինչդեռ վերջինիս հրաժարվել են սպասարկել: Թոքաբորբի հետազոտության համար զորակոչիկին ուղեգիրը տրամադրվել է միայն 20 օր անց, այն դեպքում, երբ շնչառական հիվանդությունները անհապաղ բժշկական միջամտություն են պահանջում:

11.Գ. Ղ.

Զորակոչիկ Գ. Բ.-ին զինկոմիսարիատի բժշկական հանձնաժողովը տեղեկացրել է, որ հարթաթաթության խնդրով ուղեգիր կտրամադրի համապատասխան բուժհաստատությունում հետազոտություն անցնելու համար, սակայն զորակոչիկն այդպես էլ չի ուղեգրվել հետազոտության:

Բացի այդ զորակոչիկն ահազանգել է նաև, որ չնայած իր առողջական վիճակի հետազոտությունների արդյունքները ի սկզբանե տեղադրվել են Արմեդ հավելվածում, սակայն կարճ ժամանակ անց վերջինս դրանց հասանելիություն չի ունեցել:

12.Տ. Գ.

Զորակոչիկն ունի մի շարք առողջական խնդիրներ՝ հոգեկան առողջության, նյարդային խնդիրներ, ծանրալսություն: Զորակոչիկին նախկինում 3 անգամ տրամադրվել է տարկետում բուժման նպատակով, մինչդեռ տարկետման ընթացքում զորակոչիկը բուժում չի ստացել և առողջական վիճակում դրական փոփոխություն չի արձանագրվել, ավելին՝ առողջական վիճակն առավել սրված է դրսևորվում: Չնայած դրան, 2024 թ ձմեռային զորակոչին Տիգրան Գալստյանը ճանաչվել է պիտանի զինվորական ծառայության համար ՝թերի իրականացված հետազոտությունների

պատճառով: Մասնավորապես՝ 2024 թ ձմեռայի զորակոչին Տ. Գ.-ն չի փորձաքննվել ծանրալսության կապակցությամբ, անտեսվել են գանգուղեղային նյարդի ախտահարումը և հոգեկան առողջության խնդիրը: Զորակոչիկը ստիպված է եղել սեփական միջոցներով անցնել թանկարժեք հետազոտություն:

Կազմակերպությունը դիմեց ՀՀ պաշտպանության նախարարությանը զորակոչիկին համալիր հետազոտությունների ուղեգրելու և վերստին ԿԲՀ նիստին ներկայացնելու հարցով: Արդյունքում զորակոչիկը ճանաչվել է ժամանակաավորապես ոչ պիտանի զինվորական ծառայություան համար:

Պահեստազորում հաշվառված անձ

13. Հ. Մ.

Պահեստազորային Հ. Մ.-ն կանչվել է վարժական հավաքների, սակայն աշխատանքով պայմանավորված նշված ժամանակահատվածում չի կարող մասնակցել հավաքներին: Պահեստազրայինն ահազանգել է նաև այն մասին, որ պատշաճ չի ծանուցվել վարժական հավաքներին ներկայանալու մասին: Կազմակերպությունը գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը պահեստազորայինին վարժական հավաքներին մասնակցության ժամանկահատվածի ընտրության հնարավորություն թույլ տալու հարցով:

Կազմակերպության դիմումի հիման վրա վերջինիս հնարավորություն է ընձեռնվել վարժական հավաքներին այլ ժամանակահատվածում մասնակցելու համար:

14.Ա. Մ

Պահեստազորայինը Կազմակերպությանն է դիմել, նշելով, որ կանչվել է վարժական հավաքների, սակայն ունի առողջական խնդիրներ կապված երիկամների և սրտի հետ, որոնցով պայմանավորված ունենում է շնչահեղձության նոպաներ: Երիկամների խնդրի համար ըստ ՀՀ կառավարության 2018 թ. ապրիլի 12-ի N 404-Ն որոշման 54-րդ հոդվածի պահանջի պետք է իրականացվի համակարգչային շերտագրում, որը չի իրականացվել, իսկ պահեստազորայինը չունի ֆինանսական միջոցներ հետազոտությունն իրականացնելու համար:

Կազմակերպությունը գրությամբ դիմել է ՀՀ պաշտպանության նախարարությանը պահեստազորայինի առողջական վիճակը պարզելու նպատակով վերջինիս երիկամների համակարգչային շերտագրման ուղեգրելու հարցով, որի արդյունքում տրված ախտորոշման հիման վրա կայացնել նոր որոշում վարժական հավաքներին վերջինիս ենթակա լինելու վերաբերյալ:

Հավելված 2

1998 Թ-ԻՑ ՄԻՆՉԵՎ 2025 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 31-Ը ՀՀ ԿԱՌԱՎԱՐՈՒԹՅԱՆ ՈՐՈՇՄԱՄԲ ՊԱՐՏԱԴԻՐ ԶԻՆՎՈՐԱԿԱՆ ԾԱՌԱՅՈՒԹՅՈՒՆԻՑ ՏԱՐԿԵՏՈՒՄ ՍՏԱՑԱԾ ԵՎ ԱԶԱՏՎԱԾ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐԻ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ

ՀՔԱ Վանաձորի գրասենյակն ուսումնասիրում է 1998 թ-ից ի վեր մինչեւ 2024 թ ձմեռային զորակոչի ավարտն ընդգրկող ժամանակահատվածը՝ 2025 թ. հունվարի 31-ը, ՀՀ կառավարության կողմից ընդունված որոշումները, որոնց հիման վրա առանձին քաղաքացիների տրամադրվում է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում կամ ազատում տարբեր հիմքերով:

Քաղաքացիներին Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից ազատման կամ տարկետման տրամադրման մասին որոշում է կայացվում համաձայն 2017 թ. նոյեմբերի 17-ի «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 21-րդ և 22-րդ հոդվածների 5-րդ կետի, ինչպես նաև ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 450-Ն, N 451-Ն, N 457-Ն որոշումների:

«Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքի 21-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվում է՝ « ...քաղաքացին կարող է բացառիկ դեպքերում ազատվել պարտադիր զինվորական ծառայությունից՝ ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով»: Նշված օրենքի 22-րդ հոդվածի 5-րդ կետով սահմանվում է, որ «...Գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում կարող է տրվել նաև ՀՀ կառավարության որոշմամբ՝ ՀՀ կառավարության սահմանած կարգով և պայմաններով»:

Ի դեպ, 2023 թ. ապրիլի 13-ին ՀՀ ԱԺ կողմից ընդունվեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» ՀՀ օրենքում փոփոխություններ և լրացումներ կատարելու մասին (ՀՕ-126-Ն[38]) օրենքը: Մասնավորապես, սահմանվեց,

[38] https://www.arlis.am/documentview.aspx?docid=176876

որ գիտության, կրթության, մշակույթի, արվեստի և սպորտի բնագավառներում նշանակալի նվաճումների համար, ինչպես նաև բնագիտական, տեխնոլոգիական, ճարտարագիտական և մաթեմատիկական (ԲՏՃՄ) ուղղություններով պետության համար առաջնահերթ և կարևորություն ներկայացնող մասնագիտություններով համապատասխան բուհերում սովորողին նախատեսված տարկետումները չեն կարող տրվել ուսումնառության ընթացքում զինվորական պատրաստություն անցնելու և ուսումնառության ավարտից հետո ՀՀ պաշտպանության նախարարության նշած վայրում և պայմաններով զինվորական ծառայություն անցնելու մասին ՀՀ ՊՆ հետ քաղաքացիաիրավական բնույթի պայմանագիր կնքած քաղաքացիներին:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 450-Ն որոշման համաձայն՝ պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է տրամադրվում սպորտի բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին[39]:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-ն որոշման՝պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է տրամադրվում գիտության և կրթության բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին[40]:

ՀՀ կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 457-ն որոշման՝պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում է տրամադրվում մշակույթի և արվեստի բնագավառներում նշանակալի նվաճումներ ունեցող քաղաքացիներին[41]:

Քաղաքացիները Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում են ՀՀ կառավարության 2019 թվականի փետրվարի 15-ի N 89- Ն՝ «Քաղաքացուն բացառիկ դեպքերում պարտադիր զինվորական ծառայությունից ազատելու կարգը սահմանելու մասին» որոշման համաձայն[42] ՝ մշակույթի և արվեստի, սպորտի, ինչպես նաև գիտական աստիճան ունեցող քաղաքացուն կրթության և գիտության բնագավառներում գործունեության հիմքով,

[39] arlis.am/DocumentView.aspx?docid=202239
[40] arlis.am/DocumentView.aspx?docid=189049
[41] https://www.arlis.am/DocumentView.aspx?DocID=135030
[42] https://www.arlis.am/documentview.aspx?docid=202238

որոշման մեջ կատարված փոփոխությանն անդրադարձել ենք սույն զեկույցի համապատասխան բաժնում:

2022 թվականի հոկտեմբերի 5-ին ընդունվեց «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքում լրացում և փոփոխություն կատարելու մասին» ՀՕ-363-Ն օրենքը[43]: Օրենքի 21-րդ հոդվածը լրացվեց 5.1-ին մասով: Մասնավորապես՝ «Պարտադիր զինվորական ծառայությունից ազատվում է այն քաղաքացին, որը, որպես օտարերկրյա քաղաքացի, Հայաստանի Հանրապետության քաղաքացիություն է ձեռք բերել որևէ մարզաձևի՝ Հայաստանի Հանրապետության հավաքական թիմում (որևէ տարիքային խմբում) հանդես գալու համար և մինչև 2021 թվականի մայիսի 1-ը պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման իրավունքը կորցրել է: Սույն օրենքը գործել է մինչև 2023 թվականի հունվարի 31-ը:

Համաձայն մեր ուսումնասիրության՝ 1998-ից մինչեւ 2025 թ. հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում՝ 27 տարվա ընթացքում, զինվորական ծառայությունից տարկետում է ստացել 3340 քաղաքացի, որոնցից 72-ի տարկետումը հետագայում դադարեցվել է (57-ի տարկետումը դադարեցվել է առաջին անգամ տարկետում ստանալուց հետո, 14-ի դեպքում դադարեցվել է 2-րդ անգամ տրված տարկետումը, 1-ի դեպքում՝ 3-րդ անգամ տրված տարկետումը):

Ուսումնասիրության համաձայն՝ 1998 թ-ից մինչև 2025 թ հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում զինվորական ծառայությունից ազատվել է 456 քաղաքացի: Ընդ որում, ազատված անձանցից 86-ը, ըստ Կազմակերպության ուսումնասիրության, պարտադիր զինվորական ծառայությունից ազատվել են միանգամից՝ առանց մինչ այդ տարկետում ստանալու: 37 անձ զինվորական ծառայությունից ազատվել է նախկինում մեկ կամ ավելի անգամ տարկետում ստանալուց հետո: 1 քաղաքացու զինվորական ծառայությունից տրված ազատման որոշումը դադարեցվել է (2023 թ):

2573 քաղաքացի զինվորական ծառայությունից տարկետում է ստացել 1 անգամ, **767** քաղաքացի տարկետում է ստացել ավելի քան մեկ անգամ, մասնավորապես՝

479 քաղաքացի՝ 2 անգամ

208 քաղաքացի՝ 3 անգամ

[43] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=169377

36 քաղաքացի՝ 4 անգամ

16 քաղաքացի՝ 5 անգամ

9 քաղաքացի՝ 6 անգամ

10 քաղաքացի՝ 7 անգամ

6 քաղաքացի՝ 8 անգամ

3 քաղաքացի՝ 9 անգամ (տե՛ս Աղյուսակ 5-ը)

Աղյուսակ 5. 1998-ից մինչ 2025 թ. հունվարի 31-ը ՀՀ Կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած կամ ազատված անձանց թիվն ըստ հիմքերի եւ տարկետումների հաճախականության

Տարկետման և ազատման հիմքերը	Տարկետումների թիվն ըստ անձանց	Ազատումների թիվն ըստ անձանց	Պարտադիր զինվորական ծառայությունից տարկետումների հաճախականությունը և դրանց արդյունքում ազատումների թիվը			
			Տրամադրված տարկետումների հաճախականությունը՝ ներառյալ նույն անձին 1 և/կամ մի քանի անգամ տրամադրված տարկետումների թիվը		Տարկետումից հետո ազատում Անձ	Միանգամից ազատում
Կրթական	**1371**	**0**	**1498**			
			1 անգամ	1281		
			2 անգամ	61		
			3 անգամ	23		
			4 անգամ	4		
			5 անգամ	2		
Հոգևորական	**404**	**190**	**1008**		**172**	**18**
			1 անգամ	133	26	18
			2 անգամ	99	55	
			3 անգամ	110	70	
			4 անգամ	22	9	
			5 անգամ	12	1	
			6 անգամ	9	6	
			7 անգամ	10	2	
			8 անգամ	6	0	
			9 անգամ	3	3	
Սպորտ	**491**	**141**	**720**		**99**	**42**

			1 անգամ[44]	335	23	26
			2 անգամ	89	48	
			3 անգամ	61	26	
			4 անգամ	6	2	
Հիմքը նշված չէ	**59**	**6**	**63**		**3**	**3**
			1 անգամ	55	2	3
			2 անգամ	4	1	
Մշակութային	**67**	**12**	**107**		**8**	**4**
			1 անգամ	40	4	4
			2 անգամ	20	2	
			3 անգամ	3	1	
			4 անգամ	2	1	
			5 անգամ	2		
Գիտական-կրթական	**941**	**71**	**1172**		**63**	**8**
			1 անգամ	725	49	8
			2 անգամ	203	14	
			3 անգամ	11		
			4 անգամ	2		
Գիտական և գիտատեխնիկական գործունեություն	**1**	**36**	**1**		**25**	**11**
			1 անգամ	1	5	11
			2 անգամ		20	
Աշխատանքային	**6**	**0**	**9**			
			1 անգամ	3		
			2 անգամ	3		
Ընդամենը	**3340**	**456**	**4577**		**370**	**86**

Զինվորական ծառայությունից 3340 տարկետում ստացած և 456 ազատված քաղաքացիների վերաբերյալ 1998 թվականից մինչև 2025 թվականի հունվարի 31-ը Կառավարության կողմից ընդունվել է 819 որոշում, որից 734-ը՝ տարկետման, 117-ը՝ ազատման վերաբերյալ:

[44] 3 դեպքում տարկետումը դադարեցվել է որոշակի սպորտաձևի հավաքական թիմի կազմում 3 քաղաքացիների ընդգրկված չլինելու հիմքով

Աղյուսակ 6. 1998-ից մինչ 2025 թ. հունվարի 31-ը ՀՀ կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տարկետում ստացած կամ ազատված անձանց վերաբերյալ ընդունված որոշումների թիվն ըստ տարկետման և ազատման հիմքերի

Տարկետման և ազատման հիմքերը	Տարկետման մասին որոշում	Ազատման մասին որոշում	Ընդամենը
Կրթական	458	0	**458**
Հոգևորական	37	20	**57**
Մշակութային	51	10	**61**
Սպորտ	99	36	**135**
Հիմքը նշված չէ	37	3	**40**
Գիտական-կրթական	48	37	**85**
Աշխատանքային	3	0	**3**
Գիտական-գիտատեխնիկական	1	11	**12**
Ընդամենը	**734**	**117**	**851**

ՀՀ կառավարության որոշմամբ պարտադիր զինվորական ծառայությունից տրամադրված տարկետումների վերաբերյալ տվյալներ

1998-ից մինչեւ 2025 թ. հունվարի 31-ն ընկած ժամանակահատվածում **կրթությունը** շարունակելու նպատակով ընդունվել է **458** տարկետում տրամադրելու որոշում **1371**[45]քաղաքացիների վերաբերյալ, որոնք սովորում են հանրակրթական, հիմնական կրթության հիմքի վրա առանց ընդհատման նախնական (արհեստագործական) կամ միջին մասնագիտական կրթական ծրագրերով, ինչպես նաև բարձրագույն ուսումնական հաստատություններում բակալավրի կամ դիպլոմավորված մասնագետի կամ ինտեգրացված կրթական ծրագրով առկա ուսուցմամբ:

Հայ Առաքելական եկեղեցու **404** հոգևոր սպասավորների և/կամ հոգևոր ճեմարաններում ուսուցանող սաների վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման վերաբերյալ **37** որոշում:

[45]Այն անձինք, ովքեր նախկինում կրթական հիմքով տարկետում ստանալուց հետո նաև տարկետում են ստացել կամ ազատվել են գիտական-կրթական հիմքով, Կազմակերպության կողմից ներառվել են գիտական-կրթական հիմքով տարկետում ստացածների թվում:

Մշակութային (մշակույթի և արվեստի բնագավառում ունեցած բացառիկ ընդունակությունների) հիմքով **65** անձի վերաբերյալ կայացվել է տարկետման մասին **51** որոշում:

Սպորտի բնագավառում բացառիկ ունակություններ ցուցաբերած **491** անձանց վերաբերյալ ընդունվել է տարկետման մասին **99** որոշում:

Գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **941** անձի վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից տարկետման մասին **48** որոշում: *Ի դեպ, 25 հունվարի 2024 թվականի N 103-Ն որոշմամբ*[46] *փոփոխություն կատարվեց «Հայաստանի Հանրապետության կառավարության 2018 թվականի ապրիլի 12-ի N 451-Ն որոշման» մեջ: Սահմանվեց, որ ստացած տարկետման ժամկետի ընթացքում յուրաքանչյուր տարվա մինչև* ***հոկտեմբերի 30-ը*** *քաղաքացին կամ նրա օրինական ներկայացուցիչը կամ նրա կողմից լիազորված անձը քաղաքացու զինվորական հաշվառումն իրականացրած ստորաբաժանում են ներկայացնում համապատասխան ուսումնական հաստատության կողմից տրված տեղեկանքը՝ հաջորդ կուրս փոխադրվելու վերաբերյալ: Նախկինում ժամկետը սահմանված էր մինչև սեպտեմբերի 30-ը:*

Աշխատանքային հիմքով տարկետում տրամադրելու վերաբերյալ ընդունվել է **3** որոշում **6** անձի վերաբերյալ:

59 անձի վերաբերյալ տարկետման մասին **37** որոշումներում **չի նշվում տարկետման պատճառը**:

Կառավարության որոշմամբ պարտադիր ժամկետային զինվորական ծառայությունից ազատման վերաբերյալ որոշումներ

Հայ Առաքելական եկեղեցու **190 հոգեւոր սպասավորների** եւ/կամ հոգեւոր ճեմարաններում ուսուցանող սաների վերաբերյալընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից ազատման **վերաբերյալ 20 որոշում**: Նշված անձանցից 168-ը նախկինում ստացել է տարկետում մեկ կամ մի քանի անգամ, իսկ 18-

[46] https://www.arlis.am/DocumentView.aspx?docid=189042

ը միանգամից ազատվել են զինվորական ծառայությունից՝ առանց նախկինում տարկետում ստանալու:

Մշակույթի բնագավառում ցուցաբերած բացառիկ ընդունակությունների համար **10** անձի վերաբերյալ կայացվել է զինծառայությունից ազատման մասին **10** որոշում: Ընդ որում նրանցից 5-ը ազատվել են զինծառայությունից մեկ կամ ավելի անգամ տարկետում ստանալուց հետո, իսկ 3 հոգին՝ միանգամից:

Սպորտի բնագավառում բացառիկ ունակություններ ցուցաբերած **141** անձանց վերաբերյալ ընդունվել է զինծառայությունից ազատման մասին **36** որոշում: Նրանք բոլորը նախկինում մեկ կամ մի քանի անգամ ստացել են տարկետում:

Գիտության և կրթության բնագավառում նշանակալի նվաճումներ ունեցող **71** անձի վերաբերյալ ընդունվել է պարտադիր զինվորական ծառայությունից ազատման մասին 37 որոշում:

6 անձի դեպքում զինծառայությունից ազատման վերաբերյալ ընդունված **3** որոշումներում չի նշվում ազատման հիմքը: Ընդ որում նրանցից 3-ը նախկինում ստացել է տարկետում, իսկ 3-ը միանգամից ազատվել են զինծառայությունից՝ առանց նախկինում տարկետում ստանալու: